



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՉՈՐՄԵՐՈՐԴ ՏԱՐԻ 09(349) «01» հունիսի 2018թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

	ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
138	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 365-Ն որոշումը.....	3
139	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 379-Ն որոշումը.....	8
140	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 387-Ն որոշումը.....	9
141	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 388-Ն որոշումը.....	10
142	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 389-Ն որոշումը.....	11
143	«Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության արտաբյուջետային հաշվի միջոցների օգտագործման կարգը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 390-Ն որոշումը.....	12
144	«Անասնաբուծությանը ներկայացվող պարտադիր պահանջները հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 391-Ն որոշումը.....	15
145	«2018 թվականի ամառային գորակոչը կազմակերպելու մասին» ԱՀ կառավարության N 399-Ն որոշումը.....	
146	«Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Թաղավարդ համայնքի անասնաբուծության կանոնակարգման և արոտների կառավարման ծրագիրը հաստատելու մասին» ԱՀ կառավարության N 400-Ն որոշումը	20
147	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 30-ի N 1053-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 402-Ն որոշումը.....	28
148	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 29-ի N 451 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 403-Ն որոշումը...	29

149	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 408-Ն որոշումը.....	31
150	«Արցախի Հանրապետությունում մշտական բնակություն հաստատած վերաբնակ ընտանիքներին վերաբնակեցման ծրագրով հատկացված բնակարանների, բնակելի տների և տնամերձ հողամասերի սեփականության իրավունքով տրամադրելու կարգը հաստատելու, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 13-ի N 819-Ն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 27-ի N 709-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N413-Ն որոշումը.....	32
151	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 414-Ն որոշումը.....	36
152	«Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի N 370-Ն և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 12-ի N 99-Ա որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N415-Ն որոշումը.....	39
153	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 18-ի N 82-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 420-Ն որոշումը.....	41
154	«Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 1-ի N 135-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 421-Ն որոշումը.....	42
155	«Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի N 370-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 426-Ն որոշումը.....	43
156	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 428-Ն որոշումը.....	46
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ		
157	«Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում հասարակական կարգի պահպանման և անվտանգության ապահովման, գույքի, ինչպես նաև շենքի և դրա սպասարկման տարածքի պահպանության կարգը հաստատելու մասին» ԱՀ դատարանների նախագահների խորհրդի N 13-Ն որոշումը.....	47

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 մայիսի 2018թ.

N 365-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-103-Ն հրամանագրին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ շ ռ մ է**.

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 6-ի «Միանվագ դրամական օգնության մասին» N 133-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին կետի «պետական բյուջեի» բառերից առաջ, որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 2-րդ, 2.2-րդ, 7-րդ կետերում, 8-րդ կետի «ամուսնու հաշվառված» բառերից առաջ, «տարածքում» բառից առաջ, 14-րդ, 17-րդ, 23-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերով և դրանց հոլովածներով.

2) որոշման 2-րդ կետի 6-րդ ենթակետում «տարածքային մարմնի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների կողմից» բառերով.

3) որոշման 3-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին ու Ստեփանակերտի քաղաքապետին» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարին» բառերով.

4) որոշմամբ հաստատված՝

ա. թիվ 1 հավելվածի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6. Դրամական օգնությունը նշանակվում է Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի սոցիալական ծառայության համապատասխան տարածքային գործակալության (այսուհետ՝ գործակալություն) կողմից:»,

բ. թիվ 1 հավելվածի 7-րդ կետում «մասին տեղեկանքը» բառերից հետո լրացնել «կամ վավեր սոցիալական ապահովության քարտը և դրա պատճենը» բառերը,

գ. թիվ 1 հավելվածի 7-8-րդ, 15-րդ, 19-րդ, 21-23-րդ կետերում, թիվ 3, թիվ 4, թիվ 5, թիվ 6, թիվ 7 հավելվածներում «տարածքային մարմին» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «գործակալություն» բառով և դրա հոլովածներով,

դ. թիվ 1 հավելվածի 8-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առնթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով,

ե. թիվ 1 հավելվածի 10-րդ կետում «տարածքային մարմինների» բառերը փոխարինել «գործակալությունների» բառով,

զ. թիվ 1 հավելվածի 10-րդ, 19-րդ կետերից հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի» բառերը,

է. թիվ 3, թիվ 4 հավելվածներում «տեղեկանքի» բառից հետո լրացնել «կամ վավեր սոցիալական ապահովության քարտի» բառերը,

ը. թիվ 5 հավելվածում «ղեկավար» բառը փոխարինել «պետ» բառով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 22-ի «Ամենամյա դրամական օժանդակություն սահմանելու մասին» N 828-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին, 4-րդ կետերում, որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 2-րդ կետում, 4-րդ կետի 3-րդ ենթակետում, 5-6-րդ, 12-րդ, 16-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերով և դրանց հոլովածներով.

2) որոշման 3-րդ կետի 5-րդ ենթակետում «տարածքային մարմնի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի սոցիալական ծառայության տարածքային գործակալությունների կողմից» բառերով.

3) որոշման 5-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին ու Ստեփանակերտի քաղաքապետին» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարին» բառերով.

4) որոշմամբ հաստատված՝

ա. թիվ 1 հավելվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Դրամական օժանդակությունը նշանակվում է Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի սոցիալական ծառայության համապատասխան տարածքային գործակալության (այսուհետ՝ գործակալություն) կողմից:»,

բ. թիվ 1 հավելվածի 4-րդ, 8-րդ, 12-13-րդ, 15-16-րդ կետերում, թիվ 2, թիվ 3, թիվ 4, թիվ 5 հավելվածներում «տարածքային մարմին» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «գործակալություն» բառով և դրա հոլովածներով,

գ. թիվ 1 հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) հանրային ծառայությունների համարանիշը և դրա պատճենը կամ վավեր սոցիալական ապահովության քարտը և դրա պատճենը կամ Արցախի Հանրապետության ոստիկանության կողմից տրված՝ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքը»,

դ. թիվ 1 հավելվածի 14-րդ կետում «տարածքային մարմինների» բառերը փոխարինել «գործակալությունների» բառով, իսկ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության» բառերը հանել,

ե. թիվ 2 հավելվածում «Սոցիալական քարտի համարը» բառերը փոխարինել «Հանրային ծառայությունների համարանիշը կամ վավեր սոցիալական ապահովության քարտի համարը» բառերով, իսկ «ԼՂՀ» հապավումը՝ «Արցախի Հանրապետության» բառերով,

զ. թիվ 3 հավելվածում «Սոցիալական քարտի համարը կամ նշում՝ սոցիալական քարտ չունենալու» բառերը փոխարինել «Հանրային ծառայությունների համարանիշը կամ վավեր սոցիալական ապահովության քարտի համարը կամ նշում՝ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու» բառերով,

է. թիվ 4, թիվ 5 հավելվածներում «ղեկավար» բառը փոխարինել «պետ» բառով:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 22-ի «Բնախրային օգնության տրամադրման կարգը սահմանելու մասին» N 140-Ն որոշմամբ սահմանված հավելվածի՝

1) 1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարության համակարգում գործող կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություն) միջոցով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության (այսուհետ՝ նախարարություն) համակարգում գործող կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություն) միջոցով Արցախի Հանրապետության» բառերով.

2) 5-րդ կետից հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության» բառերը:

4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 31-ի «Զոհված (մահացած) զինծառայողների հուղարկավորության, գերեզմանների բարեկարգման, տապանաքարերի պատրաստման և տեղադրման ծախսերի հատուցման կարգը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 26-ի N 256 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 333-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերով.

2) որոշմամբ հաստատված հավելվածի՝

ա. 2-րդ կետում, 5-րդ կետի 2-րդ պարբերության 2-րդ ենթակետում, 6-րդ կետի 2-րդ պարբերության 3-րդ ենթակետի «մշտապես» բառից առաջ, 4-րդ ենթակետում, 9-րդ, 12-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի

Հանրապետություն» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերով և դրանց հոլովաձևերով,

բ. 5-րդ կետի 1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Դրամական հատուցումը նշանակվում է Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության (այսուհետ՝ լիազոր մարմին) աշխատակազմի սոցիալական ծառայության համապատասխան տարածքային գործակալության (այսուհետ՝ գործակալություն) պետի կարգադրությամբ՝ զոհված (մահացած) զինծառայողի ընտանիքի Արցախի Հանրապետությունում մշտական հաշվառում ունեցող հետևյալ անդամներից մեկին՝»,

գ. 6-8-րդ, 10-12-րդ կետերում «իրավասու մարմին» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «գործակալություն» բառով և դրա հոլովաձևերով,

դ. 6-րդ կետի 1-ին պարբերության 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) հանրային ծառայությունների համարանիշը և դրա պատճենը կամ վավեր սոցիալական ապահովության քարտը և դրա պատճենը կամ Արցախի Հանրապետության ոստիկանության կողմից տրված հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքը»,

ե. 6-րդ կետի 2-րդ պարբերության 3-րդ ենթակետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով,

զ. 8-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարություն (այսուհետ՝ լիազոր մարմին)» բառերը փոխարինել «լիազոր մարմին» բառերով,

է. 9-րդ կետում «իրավասու մարմիններ» բառերի հոլովաձևերը փոխարինել «գործակալություններ» բառի հոլովաձևերով:

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 6-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին առողջարանային բուժման և հանգստյան տների ուղեգրերի ձեռքբերման և դրանք քաղաքացիներին հատկացնելու կարգերը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 18-ի N 228 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 509-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրի «պետական» բառից առաջ, 1-ին կետում, որոշմամբ հաստատված N 1 հավելվածի վերնագրում, 1-ին, 6-րդ կետերում, որոշմամբ հաստատված N 2 հավելվածի վերնագրում, 1-ին, 3-րդ, 6-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերով և դրանց հոլովաձևերով.

2) որոշման 2-րդ կետում, որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 2-րդ կետում, որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերով.

3) որոշմամբ հաստատված N 1 հավելվածի՝

ա. 4-րդ կետում «սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային պետական մարմիններին (այսուհետ՝ տարածքային մարմին)» բառերը փոխարինել «նախարարության աշխատակազմի սոցիալական ծառայության տարածքային գործակալություններին (այսուհետ՝ գործակալություն)» բառերով,

բ. 5-րդ, 13-րդ կետերում, 14-րդ կետի «տեղեկանք» բառից առաջ, 15-րդ կետում «տարածքային մարմին» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «գործակալություն» բառով և դրա հոլովածներով,

գ. 6-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) հանրային ծառայությունների համարանիշը և դրա պատճենը կամ վավեր սոցիալական ապահովության քարտը և դրա պատճենը կամ Արցախի Հանրապետության ոստիկանության կողմից տրված՝ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքը.»:

դ. 10.1-ին կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով՝ նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության և հասարակայնության հետ կապերի բաժնի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարի հրամանով՝ նախարարության աշխատակազմի ընտանիքների կարիքավորության գնահատման և սոցիալական աջակցության վարչության» բառերով,

ե. 14-րդ կետում «Տարածքային մարմիններից» բառերը փոխարինել «Գործակալություններից» բառով.

4) որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 6-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) հանրային ծառայությունների համարանիշը և դրա պատճենը կամ վավեր սոցիալական ապահովության քարտը և դրա պատճենը կամ Արցախի Հանրապետության ոստիկանության կողմից տրված՝ հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքը.»:

6. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 մայիսի 2018թ.

N 379-Ն

ք.Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ր ք յ ն ի է**:

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 14-ի N 465 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Խնապատի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,287 հեկտար՝ վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Խնապատի գյուղական համայնքի ղեկավարին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 մայիսի 2018թ.

N 387-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ղ ղ մ մ է**.

1. Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Քնարավանի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 3,8278 հեկտար արոտավայրը, համաձայն հավելվածի, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 մայիսի 2018թ.

N 388-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է**.

1. Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Նոր Կարաչինարի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,1727 հեկտար արոտավայրը, համաձայն հավելվածի, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 մայիսի 2018թ.

N 389-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ղ ղ ղ ղ** է.

1. Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Նոր Խարխափուտի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության 6,7671 հեկտար արոտավայրը, համաձայն հավելվածի, փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 մայիսի 2018թ.

N 390-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության արտաբյուջետային միջոցների օգտագործման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Կ Ա Ր Գ
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՉԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 20-ի N 456-Ա որոշման համաձայն, Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) համար Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարության գանձապետական բաժնում բացված արտաբյուջետային հաշվի միջոցների օգտագործման կարգը:

2. Նախարարության արտաբյուջետային հաշվի միջոցները տնօրինվում են Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարի կողմից:

3. Նախարարության արտաբյուջետային հաշվի միջոցների մուտքը գոյանում է Նախարարության կողմից պայմանագրային հիմունքներով իրականացվող տեխնիկական հսկողությունից և այլ աղբյուրներից ստացվող միջոցներից՝ քառասուն տոկոսի չափով:

4. Նախարարության արտաբյուջետային հաշվի միջոցներն օգտագործվում են Նախարարության աշխատակազմի կապիտալ շինարարության վարչության տեխնիկական հսկողություն իրականացնողների նյութական խրախուսման և համակարգի զարգացման համար, մասնավորապես՝ տեխնիկական հսկողության իրականացման համար տեխնիկական պարկի վերազինման, շինարարական օբյեկտներում պարբերաբար ստուգումներ իրականացնելու համար անհրաժեշտ քանակությամբ տրանսպորտային միջոցների ու վառելիքի, գույքի և այլ սարքավորումների, ինչպես նաև անհրաժեշտ այլ պարագաների ձեռքբերման նպատակով:

5. Նյութական խրախուսման համար նախատեսված միջոցները վճարվում են ըստ անհրաժեշտության, որոնց տարեկան չափը չպետք է գերազանցի տվյալ աշխատողի պաշտոնային դրույքաչափի քառապատիկը:

6. Նյութական խրախուսման համար նախատեսված միջոցները չեն տրամադրվում այն աշխատողներին, որոնց նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ, որը սահմանված կարգով հանված կամ մարված չէ:

Նյութական խրախուսման համար նախատեսված միջոցները կարող են չտրամադրվել նաև տեխնիկական հսկողության իրականացման համար սահմանված իրավական ակտերի պահանջները և աշխատանքային կարգապահությունը խախտած աշխատողներին՝ նրանց անմիջական ղեկավարի միջնորդության հիման վրա: Սույն կետով սահմանված հիմքերով չտրամադրված միջոցներն ուղղվում են համակարգի զարգացմանը:

7. Համակարգի զարգացման համար նախատեսված միջոցները տնօրինվում են Արցախի Հանրապետության քաղաքաշինության նախարարի կողմից հաստատված և Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարի հետ համաձայնեցված նախահաշվին համապատասխան:

8. Տվյալ բյուջետային տարվա ընթացքում չօգտագործված միջոցները փոխանցվում են հաջորդ տարի՝ նույն նպատակով օգտագործելու համար:

9. Նախարարությունը, ֆինանսատնտեսական գործունեության մասին եռամսյակային և տարեկան հաշվետվությունների հետ միասին, Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում

հաշվետվություն՝ Նախարարության արտաբյուջետային հաշվի միջոցների գոյացման և տնօրինման մասին:

**ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 մայիսի 2018թ.

N 391-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ
ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 7-ի N 76-Ա որոշման կատարումն ապահովելու նպատակով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջադրում է**.

1. Հաստատել անասնաբուժությանը ներկայացվող պարտադիր պահանջները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն պահանջներով կարգավորվում են Արցախի Հանրապետության տարածքում գյուղատնտեսական կենդանիներ տիրապետողների (պահողների) կողմից անասնաբուծության իրականացման հետ կապված հարաբերությունները, անասնաբուծության իրականացման միջոցները և եղանակները:

2. Սույն պահանջները չեն տարածվում դեկորատիվ և ուսումնական նպատակներով պահվող փոքր կենդանիների, թռչունների, ինչպես նաև շների և կատուների վրա:

3. Գյուղատնտեսական կենդանի պահելու ժամանակը ներառում է կենդանու պահպանումը մինչև դրա օտարումը, մորթը, խոտանումը կամ բնական անկումը:

4. Գյուղատնտեսական կենդանիներ տիրապետողներն իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են սույն պահանջներով և այլ իրավական ակտերով:

5. Սույն պահանջներում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **անասնաբուծությանը ներկայացվող պարտադիր պահանջներ**՝ գյուղատնտեսական գործունեության բնագավառում գյուղատնտեսական կենդանիներ տիրապետողների կողմից պարտադիր կատարման միջոցառումների համալիր, որը ներառում է սանիտարահիգիենիկ, անասնաբուժասանիտարական կանոնների և նորմերի պահպանումը, ինչպես նաև կենդանիների համար այնպիսի պայմանների ապահովումը, որոնք չեն կարող բացասաբար անդրադառնալ հարակից տարածքների, շրջակա միջավայրի և այլ անձանց իրավունքների վրա:

2) **անասնաբուծություն**՝ գյուղատնտեսության մեջ տեսակարար կշիռ ունեցող ճյուղ, որը զբաղվում է գյուղատնտեսական կենդանիների բուծմամբ:

3) **անասնաշենք**՝ անասուններ պահելու համար նախատեսված գետնափոր, կիսագետնափոր, վերգետնյա, ժայռափոր, քարե և (կամ) փայտե կառույց:

4) **արգելված վայր**՝ համայնքի ավագանու որոշմամբ հաստատված վայրեր, որտեղ արգելվում է գյուղատնտեսական կենդանիների գտնվելը:

5) **գյուղատնտեսական կենդանիներ**՝ խոշոր և մանր եղջերավոր կենդանիներ (տավար, գոմեշ, ոչխար, այծ), խոզ, ձի, ջորի, ավանակ, ճագար, հավ, հնդկահավ, բադ, սագ և այլն:

6) **գյուղատնտեսական կենդանիներ տիրապետող**՝ (այսուհետ՝ տիրապետող)՝ այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, որին պատկանում և (կամ) որի հսկողության և (կամ) խնամքի ներքո գտնվում է գյուղատնտեսական կենդանին:

7) **գյուղատնտեսական կենդանիների պահվածք**՝ մարդու հսկողության ներքո կենդանիների խնամքի միջոցառումների համալիր, որը ներառում է տեղաբաշխումը, կերակրումը, զոռհիգիենիկ պայմանների ստեղծումը, օրվա ռեժիմի պահպանումը:

8) **կենդանիների պահվածքի համակարգ**՝ արոտային կենդանիներն ամբողջ տարվա ընթացքում կերակրվում են արոտավայրերում, մսուրաարոտային կենդանիները ձմռանը պահվում են անասնաշենքերում, ամռանը՝ արոտավայրերում, և մսուրային կենդանիների փակ պահվածքով բուծում:

9) **հոտ**՝ միասին արոտավայր տեղափոխվող կամ արածեցվող մանր եղջերավոր կենդանիների խումբ:

10) **նախիր**՝ միասին արոտավայր տեղափոխվող կամ արածեցվող խոշոր եղջերավոր կենդանիների խումբ:

11) **փակ պահվածք**, գյուղատնտեսական կենդանիներն ամբողջ տարվա ընթացքում անասնաշենքում և կից մեկուսացված տարածքում պահելը՝ բացառելով կենդանու տեղափոխումն արոտավայր:

II. ԱՆԱՄՆԱՇԵՆՔԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

6. Տաք և ավելի պայմանական գլուխ գյուղատնտեսական կենդանիների համար նախատեսված անասնաշենքերը պետք է կառուցված լինեն շինարարական նորմերին համապատասխան, հասարակական վայրերին (մանկապարտեզներին, դպրոցներին, հանրային սննդի օբյեկտներին, բուժական հաստատություններին և այլն) անմիջականորեն չհարող տարածքներում, պահվեն մաքուր և նորոգ վիճակում, ապահովված լինեն բնական և (կամ) արհեստական օդափոխության և լուսային համակարգերով, մշտական հոսող կամ պահեստավորված ջրով, կենդանիների կերակրման համար նախատեսված մուրներով: Անասնաշենքերի պատուհանները պետք է լինեն ցանցապատված:

7. Անասնաշենքերում, ըստ անհրաժեշտության, սակայն ոչ պակաս, քան վեց ամիսը մեկ անգամ, պետք է իրականացնել ախտահանման, միջատազերծման և կրծողների ոչնչացման (դեռատիզացման) աշխատանքներ:

III. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՊԱՆԻՆԵՐԻ ՊԱՀՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Գյուղատնտեսական կենդանիների պահվածքի համար պարտադիր պայման է հանդիսանում սանիտարահիգիենիկ և անասնաբուժասանիտարական կանոնների ու նորմերի պահպանումը՝ բացառելով սանիտարական և հոգեբանական բացասական երևույթների ազդեցությունը մարդկանց վրա:

9. Գյուղատնտեսական կենդանիները պետք է պահվեն իրենց պահվածքի համար առանձնահատուկ պայմաններին և պահանջներին համապատասխան:

10. Խոզերի բուծումը պարտադիր կերպով պետք է կազմակերպվի փակ պահվածքով՝ բացառելով շփումը վայրի և ընտանի կենդանիների ու թռչունների հետ: Խոզերի ինֆեկցիոն հիվանդություններից խուսափելու նպատակով արգելվում է խոզաբույծից և անասնաբույժից բացի այլ անձանց մուտքն անասնաշենք: Խոզերի բուծման համար նախատեսված անասնաշենքերում պարտադիր կերպով պետք է պահպանվի ջերմային ռեժիմը՝ 16-ից մինչև 23 աստիճան Ցելսիուս ջերմաստիճանով:

11. Տիրապետողն իրավունք ունի՝

1) տեղական ինքնակառավարման մարմիններից ճշտելու գյուղատնտեսական կենդանիների արածեցման համար նախատեսված արոտավայրերի սահմանները և արոտավայրեր տեղափոխելու ուղիները.

2) գյուղատնտեսական կենդանիների պահվածքի համակարգում ընտրելու գյուղատնտեսական կենդանիների բուծման առանձնահատկություններին հատուկ և իր համար նպատակահարմար անասնաբուծության ձևերը.

3) ինքնուրույն կամ այլ տիրապետողների հետ միասին ստեղծել գյուղատնտեսական կենդանիների միավորված նախիրներ և հոտեր.

4) իրականացնել այլ անձանց իրավունքները և պարտականությունները չխախտող այլ գործողություններ:

12. Տիրապետողը պարտավոր է՝

1) գյուղատնտեսական կենդանուն պահել դրա կենսաբանական ու անհատական առանձնահատկություններին համապատասխան և ապահովել կենդանու կենսապահովման համար բավարար պայմաններ.

2) հսկել գյուղատնտեսական կենդանուն՝ բակերի և հարակից տարածքների աղտոտումը բացառելու նպատակով, իսկ աղտոտման դեպքում՝ անհապաղ մաքրել այն.

3) անձամբ կամ իր կողմից լիազորած անձանց հսկողությամբ ապահովել գյուղատնտեսական կենդանու տեղափոխումն արոտավայր կամ գյուղատնտեսական կենդանին պահել անասնաշենքերում և կից մեկուսացված տարածքներում՝ բացառելով կենդանու տեղափոխումն արգելված վայր:

4) տեղական ինքնակառավարման մարմիններից ճշտել գյուղատնտեսական կենդանիների գտնվելու համար արգելված վայրերը:

5) անասնաշենքի սպասարկման համար նախատեսված տարածքը մեկուսացնել ցանկապատով, պատով և այլ պաշտպանիչ շերտով:

6) քաղաքային համայնքներում գյուղատնտեսական կենդանիների նախրի կամ հոտի շարժը կազմակերպել կենտրոնական հատվածները շրջանցող ուղիներով՝ նախապես համաձայնեցնելով տեղական ինքնակառավարման մարմինների հետ, կամ հատուկ տրանսպորտային միջոցներով:

7) հիվանդությունների կանխարգելման նպատակով ապահովել կենդանիների պահվածքի և անասնաշենքերի և հարակից տարածքների մաքրության օպտիմալ պայմաններ:

13. Արգելվում է՝

1) գյուղատնտեսական կենդանի պահելը չհարմարեցված շինություններում, նկուղիներում, շենքերում և բազմաբնակարան շենքերի բակերում:

2) գյուղատնտեսական կենդանու առանց հսկողության գտնվելը անասնաշենքից, իսկ անասնաշենքին կից մեկուսացված տարածքի առկայության դեպքում՝ այդ տարածքից դուրս վայրում:

3) տարբեր տեսակի կենդանիների համատեղ գտնվելն առանձնացված տարածքներ չունեցող մեկ անասնաշենքում:

4) կենդանիների խոշտանգումը, ծեծը և դրանց նկատմամբ այլ դաժան վերաբերմունքը:

5) անասնաբուժական թափոններով շրջակա միջավայրի աղտոտումը:

14. Գյուղատնտեսական կենդանուց գոյացած թափոնների վնասագրծումն անասնաշենքում և կից մեկուսացված տարածքում իրականացվում է դրա համար հատուկ նախատեսված վայրում՝ բացառելով գոմաղբաջրերի տարածումը:

15. Կուտակված գոմաղբը կարող է օգտագործվել հողի պարարտացման համար: Կուտակված գոմաղբն ամբողջությամբ օգտագործելու անհնարինության դեպքում տիրապետողը պարտավոր է ապահովել դրա տեղափոխումը տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված տարածք:

Հողի պարարտացման նպատակով գոմաղբի օգտագործումը պետք է իրականացվի սահմանված նորմերին համապատասխան՝ բացառելով շրջակա միջավայրի աղտոտումը, մարդկանց ու կենդանիների առողջության վրա բացասական հետևանքների ազդեցությունը:

16. Տիրապետողը պարտավոր է հիվանդությունների կանխման նպատակով ապահովել համապատասխան անասնաբուժական միջոցառումների իրականացումը:

IV. ԳՑՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՊԱՆՈՒՆԵՐԻ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՏԵՂԱՓՈԽՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐ

17. Արոտային շրջանում գյուղատնտեսական կենդանու, բացառությամբ խոզերի, արածեցումը պետք է լինի կազմակերպված տիրապետողի և (կամ) գյուղատնտեսական կենդանուն արոտավայր տեղափոխելու նպատակով նախրի կամ հոտի համար պատասխանատու նշանակված անձի կողմից: Անհնարինության դեպքում տիրապետողը պարտավոր է ապահովել գյուղատնտեսական կենդանու մտուրային պահվածքը: Մեկ անձի (հոտի կառավարչի) հսկողությամբ արոտավայր տեղափոխվող կամ արածեցվող նախիրը պետք է կազմված լինի առավելագույնը 70 գլուխ խոշոր եղջերավոր, իսկ հոտը՝ առավելագույնը 200 գլուխ մանր եղջերավոր կենդանիներից:

18. Գյուղատնտեսական կենդանիների նախիրների և հոտերի կազմակերպված արածեցումն իրականացվում է արոտավայրերում:

19. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սահմանվում են համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական կենդանիների արածեցման համար նախատեսված արոտավայրերի սահմանները, արոտավայրեր տանող ուղիները և արոտավայրերի օգտագործման ժամանակացույցը:

20. Գյուղատնտեսական կենդանու ազատ արածեցումը թույլատրվում է միայն տիրապետողի կամ գյուղատնտեսական կենդանու ազատ արածեցման համար համաձայնություն տված անձի ցանկապատած հողատարածքում:

21. Գյուղատնտեսական կենդանիների տեղափոխումն արոտավայր իրականացվում է տիրապետողի կամ դրա համար պատասխանատու նշանակված անձի հսկողությամբ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից սահմանված ուղիներով և արոտավայր տեղափոխելու հատուկ կանոնների պահպանմամբ:

22. Արգելվում է՝

1) գյուղատնտեսական կենդանիների առանց հսկողության բաց թողնելը կամ առանց հսկողության արածեցումը, բացառությամբ սույն պահանջների 20-րդ կետով նախատեսված դեպքի.

2) արգելված վայրում գյուղատնտեսական կենդանիների գտնվելը.

3) ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների երթևեկելի մասով (բացառությամբ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սահմանված արոտավայր տանող անցուղիների) և բաժանարար գոտիով անասուններ քշելը, ճանապարհի պաշտպանական գոտում առանց մշտական հսկողության անասուն արածեցնելը.

4) պետական անտառային ֆոնդի ոչ անտառապատ հողերում ինքնակամ անասուններ արածեցնելը:

V. ԱՆԿԱՑ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԵՆՂԱՆՈՒ ՎՆԱՍԱԶԵՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

23. Գյուղատնտեսական կենդանու դիակի թաղումը կամ դիակիզումը հանդիսանում է տիրապետողի պարտականությունը, որը պետք է կազմակերպվի անասնաբույժի ներկայությամբ և ցուցումներով:

VI. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ԽԱՆՏՄԱՆ ՀԱՄԱՐ

24. Սույն պահանջների խախտումը հանգեցնում է պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով: Պատասխանատվության կիրառումը չի ազատում խախտումների հետևանքների վերացման պարտականությունից:

25. Գյուղատնտեսական կենդանու կողմից պատճառված վնասների հատուցման հարցերը կարգավորվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ իրավական ակտերով:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 մայիսի 2018թ.

N 400-Ն

ք.Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ԹԱՂԱՎԱՐԴ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ
ԱՐՈՏԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ս ք ո շ ու մ է**.

1. Հաստատել Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Թաղավարդ համայնքի անասնաբուծության կանոնակարգման և արտոնների կառավարման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ

1) Ծրագրի կատարման հսկողությունը վերապահվում է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն):

2) Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների պատասխանատուն է հանդիսանում Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Թաղավարդ համայնքի ղեկավարը.

3) նախարարությունը տնտեսական տարին ավարտելուց հետո՝ եռամսյա ժամկետում Արցախի Հանրապետության կառավարություն է ներկայացնում հաշվետվություն՝ կատարած աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2018 թվականի մայիսի 23-ի N 400-Ն որոշման

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՑՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Ծ Ր Ա Գ Ի Ր

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ԹԱՂԱՎԱՐԴ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ
ԱՐՈՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ**

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ - 2018 ԹՎԱԿԱՆ

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- I. ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ԹԱՂԱՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ
- II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ
- III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ
- IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անասնաբուծությունը հանդիսանում է գյուղատնտեսության կարևորագույն և առաջատար ճյուղերից մեկը, որը բնակչությանը պարենային ոլորտում ապահովում է կենդանական ծագման մթերքներով (միս, կաթ, ձու և այլն), իսկ արդյունաբերությանը՝ հումքով (կաշի, բուրդ, փետուր և այլն):

Անասնաբուծությունում կարևոր նշանակություն ունեն անասնապահության կանոնակարգումը, արոտների ռացիոնալ օգտագործումը, դրանց որակական հատկանիշների, ինչպես նաև դեգրադացիայի կանխարգելման նպատակով ենթակառուցվածքային օբյեկտների (արոտային ենթակառուցվածքների օբյեկտներ) բարելավումը:

Զարգացած անասնաբուծություն ունեցող երկրներում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում արհեստական (ցանովի) արոտավայրերի հիմնադրմանը, որն իրենից ներկայացնում է բարձրարժեք կերային կուլտուրաներով ցանված տարածքներ, որոնց հիմքում ընկած է գիտականորեն հիմնավորված ագրոտեխնիկական միջոցառումների համակարգ նպատակաուղղված բարձր բերքատու խոտածածկի ստեղծմանը:

Արոտավայրերի արդյունավետ շահագործումը և որակական հատկանիշների պարբերաբար բարելավումը կախված է նրա օգտագործման և բարելավման ճիշտ պլանավորումից, պլանավորված միջոցառումների հետևողական իրականացումից:

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պլանավորվում և սահմանվում են համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական կենդանիների արածեցման համար նախատեսված արոտավայրերի սահմանները, արոտավայրեր տանող ուղիները և արոտավայրերի օգտագործման տարեկան ժամանակացույցը:

Սույն Ծրագրում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) արոտային ենթակառուցվածքների օբյեկտներ՝ կառույցներ (այդ թվում՝ կենդանիների սեզոնային պահվածքով պահման համար), կամուրջներ, արոտավայր տանող ճանապարհներ, կենդանիների հանգստյան վայրեր, կենդանիների ջուր խմելու համար նախատեսված հարմարանքներ (նովեր):

2) արոտավայր (արոտ)՝ գյուղատնտեսական կենդանիների արածեցման համար նախատեսված գյուղատնտեսական նշանակության հողեր:

3) արոտավայրերի օգտագործման տարեկան ժամանակացույց՝ համայնքի վարչական սահմաններում և (կամ) տիրապետության տակ գտնվող արոտավայրերի օպտիմալ ծանրաբեռնվածության ապահովման նպատակով գյուղատնտեսական կենդանիների արածեցման համար համայնքի ղեկավարի կողմից սահմանված ժամանակացույց:

4) արոտավայրերի մակերեսային բարելավում՝ արոտավայրերի մաքրում քարերից և թփուտներից, գյուղատնտեսական կենդանիների հերթափոխ արածեցման կազմակերպում:

5) արոտների ջրաբքիացում՝ արոտավայրերում գյուղատնտեսական կենդանիներին խմելու ջրով ապահովելու նպատակով ջրագծերի, նովերի կառուցում:

6) արոտօգտագործող՝ համայնքի վարչական սահմաններում գտնվող արոտավայրերը գյուղատնտեսական կենդանիների արածեցումով կերակրման նպատակով օգտագործող ֆիզիկական կամ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր:

7) հերթափոխ արածեցում՝ արոտավայրերի բաժանում արոտակտորների և գյուղատնտեսական կենդանիների արածեցման կազմակերպում ըստ արոտավայրերի օգտագործման տարեկան ժամանակացույցի:

8) օպտիմալ ծանրաբեռնվածություն՝ արոտավայրերի՝ առանց բուսական կազմի արտադրողականությանը և էկոլոգիական ամբողջականությանը վնասելու, գյուղատնտեսական կենդանիների արածեցման համար միավոր գլխաքանակով ծանրաբեռնում:

Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Թաղավարդ համայնքի անասնաբուծության կանոնակարգման և արոտների կառավարման ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) ներկայացվում են անասնաբուծության կանոնակարգման և արոտների կառավարմանն ուղղված իրականացվելիք միջոցառումները և ակնկալվող արդյունքները:

I. ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ԹԱՂԱՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՐԱՄԱՆ ԼԿԱՐԱԳԻՐԸ

Արցախի Հանրապետության Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղական համայնքը (այսուհետ՝ համայնք) գտնվում է ծովի մակարդակից 650-1000 մետր բարձրության վրա: Համայնքն ունի 1349 բնակիչ և 350 տնային տնտեսություն: Տեղակայված է հանրապետության հարավարևելյան հատվածում, Մարտունի շրջկենտրոնից 40, իսկ մայրաքաղաք Ստեփանակերտից՝ 42 կիլոմետր հեռավորության վրա: Համայնքը լեռնային է, ունի 2385,6 հեկտար տարածք, որից՝ 1345,67 հեկտարը գյուղատնտեսական նշանակության հողեր են: Համայնքի սահմանային գոտով հոսում է Վարանդա գետի վտակը:

Բնակչության հիմնական եկամտի աղբյուրն է համարվում անասնաբուծությունը: Խոշոր եղջերավոր կենդանիների թիվը համայնքում կազմում է 660, մանր եղջերավոր կենդանիներինը՝ 576, խոզերինը՝ 330 գլուխ, իսկ թռչուններինը՝ 5 576 թև: Խոշոր և մանր եղջերավոր կենդանիներից, խոզերից և թռչուններից ստացվում է համայնքի բնակչության սպառման ենթակա կաթի, մսի և ձվի պահանջարկը, իսկ որոշ քանակություն էլ մթերվում է վերամշակող ձեռնարկություններին: Համայնքում տարեկան արտադրվում է մոտ 74 տոննա տավարի, 7.2 տոննա ոչխարի, 32 տոննա խոզի և 16.7 տոննա թռչնի միս՝ կենդանի քաշով: Խոշոր եղջերավոր կենդանիների միջին կաթնատվությունը 2017 թվականի տվյալներով կազմել է մեկ գլխի հաշվով շուրջ 2 400 լիտր, ընդհանուրը՝ 592 000 լիտր:

Խոշոր և մանր եղջերավոր կենդանիների պահվածքը կանոնակարգված չէ, որն էլ իր հերթին առաջ է բերում բազմաբնույթ խնդիրներ, ինչպես անասնաբուծությամբ, այնպես էլ բուսաբուծությամբ զբաղվողների համար:

Համայնքի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական կենդանիների արածեցման համար նախատեսված ընդհանուր արոտների մակերեսը կազմում է 330 հեկտար:

Արոտները գերծանրաբեռնված են, չկան հերթավոխ արածեցման գործող մեխանիզմներ, ինչը տարիների ընթացքում պատճառ է հանդիսացել բարձրարժեք ընդդեմ կերաբույսերի տեսակների, ինչպես նաև ստացվող կերի քանակի և որակի նվազեցման համար: Արոտավայրերի գերակշիռ մասը թփակալված է (թփակալման տոկոսը տատանվում է 5-60 տոկոսի սահմաններում), իսկ որոշ մասերում թունավոր և կերակրման համար ոչ պիտանի բույսերը կազմում են բուսածածկի մոտ 80 տոկոսը: Արոտներում կենդանիների համար խմելու ջրի բացակայության պատճառով արածեցման ենթակա ողջ գլխաքանակը խմելու ջրից օգտվելու համար պարբերաբար ստիպված է լինում հաղթահարել մեծ տարածություն, որն իր հերթին բացասաբար է ազդում գյուղատնտեսական կենդանիների մթերատվության վրա՝ 10-25 տոկոսով նվազեցնելով կենդանիների կաթնատվությունը և 25-30 տոկոսով քաշաճը:

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Սույն Ծրագրի նպատակն է բացառել արգելված վայրում գյուղատնտեսական կենդանու հայտնվելու դեպքերը, ստեղծել նախադրյալներ համայնքում անասնաբուծության կանոնակարգման և արոտների կառավարման համար, ինչի շնորհիվ, առկա ռեսուրսների արդյունավետ օգտագործմամբ, բարձրացնել արոտների արդյունավետությունն ու կերային արժեքը, վերականգնել բուսածածկը, կանխել

հողերի հետագա դեգրադացման վտանգը, ստեղծել նախադրյալներ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների գլխաքանակի, անասնապահական մթերքների արտադրության ծավալների ավելացման, նախրի և հոտի կառավարիչների համար աշխատատեղերի ստեղծման, ինչպես նաև անասնաբուծության և բուսաբուծության զարգացման և գյուղացիական տնտեսությունների կենսամակարդակի բարձրացման համար:

2. Սույն Ծրագրի խնդիրներն են՝

1) անասնաբուծության կանոնակարգման և զարգացման համար անհրաժեշտ պայմանների, առկա արոտավայրերի լիարժեք օգտագործման և արոտների բարելավման համար հնարավորությունների ստեղծումը, արոտավայրերի բերքատվության բարձրացումը.

2) արոտավայրերում գյուղատնտեսական կենդանիներին խմելու ջրով ապահովումը.

3) արոտավայրերում գյուղատնտեսական կենդանիների հերթափոխով արածեցման կազմակերպումը.

4) Ծրագրի հետևողական իրականացմամբ համայնքի բնակչության եկամուտների ավելացումը:

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

3. Ծրագրի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ համայնքում արոտների արդյունավետ կառավարման նպատակով 2018 թվականի ընթացքում անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները

1) արոտների ջրաբքիացում՝ համայնքային արոտավայրերի սահմաններում գտնվող հինգ վայրերում կենդանիների ջուր խմելու համար նախատեսված 12 մետր երկարությամբ նովերի տեղադրում և այդ նովերում մշտական ջուր ապահովելու համար 1150 մետր երկարությամբ ջրագծի անցկացում: Պահանջվող աշխատանքների իրականացման համար նախատեսվում է ներդնել 5 511 400 (հինգ միլիոն հինգ հարյուր տասնմեկ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ գումար.

2) արոտավայրերի մակերեսային բարելավում. պահանջվող աշխատանքների իրականացման համար նախատեսվում է ներդնել 12 540 000 (տասներկու միլիոն հինգ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ գումար: Մակերեսային բարելավման թփուտներից մաքրման ենթակա է 330 հեկտար արոտավայր.

3) միջողաշտային ճանապարհների բարեկարգում. պահանջվող աշխատանքների իրականացման համար նախատեսվում է ներդնել 800 000 (ութ հարյուր հազար) ՀՀ դրամ գումար.

4) արոտավայրերի օպտիմալ ծանրաբեռնվածության ապահովում.

5) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սահմանված արոտավայրերի օգտագործման ժամանակացույցի հաստատում:

4. Աշխատանքների ֆինանսավորում.

1) արոտների ջրաբքիացման աշխատանքների ֆինանսավորումը նախատեսվում է իրականացնել Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից պատվիրված նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա, կապալառու կազմակերպության հետ պայմանագրի կնքմամբ.

2) համայնքի ղեկավարը արոտավայրերի մակերեսային բարելավման, միջողաշտային ճանապարհների բարեկարգման աշխատանքների իրականացման համար ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի հետ կնքում է պայմանագրեր: Պայմանագրերով նախատեսված աշխատանքների ավարտից հետո համայնքի ղեկավարը կատարված աշխատանքների կատարողականը ներկայացնում է նախարարություն.

3) սույն Ծրագրի 4-րդ կետի 2-րդ ենթակետով նշված աշխատանքների իրականացման համար նախատեսված գումարները՝ նախարարության և համայնքի միջև կնքված պայմանագրի հիման վրա, աշխատանքների ավարտից հետո համայնքի ղեկավարի կողմից ներկայացված կատարողականի՝ Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովի դրական եզրակացության դեպքում տրամադրվում են համայնքին:

5. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը համակարգում և վերահսկում է Ծրագրով նախատեսվող միջոցառումների իրականացման գործընթացը:

6. Սույն Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի «Անասնապահության կանոնակարգում և արոտների կառավարում» ծրագրով՝ հետևյալ ուղղություններով՝ ստորև ներկայացված աղուսակում:

Աղյուսակ

ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆԻ ԹԱՂԱՎԱՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԱՐՈՏՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ 2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

Հ/Հ	Ներդրումների նպատակը	2018թ.	(հազ. դրամ)			
			Այդ թվում՝ ըստ եռամսյակների			
			1-ին	2-րդ	3-րդ	4-րդ
1.	Արոտների ջրաբքիացում	5331.4		1500.0	2500.0	1331.4
2.	Արոտների ջրաբքիացման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	180.0		180.0		
3.	Մակերեսային բարելավում (1 հեկտարի հաշվով 38 000 ՀՀ դրամ)	12540.0	-	4000.0	4000.0	4540.0
4.	Միջոցաշտային ճանապարհների բարեկարգում (200 մետր)	800.0	-	800.0	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ		18851.4		6480.0	6500.0	5871.4

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

7. Սույն Ծրագրի իրականացմամբ ակնկալվում է համայնքում գյուղատնտեսական ոլորտի զարգացման առաջընթաց, որն առաջիկա տարիներին կդրսևորվի հետևյալ արդյունքներով.

1) իրականացվող ներդրումների հաշվին կկատարվեն 330 հեկտար արոտավայրերի մակերեսային բարելավման և ջրաբքիացման աշխատանքներ, ինչի արդյունքում կավելանան արոտավայրերի արդյունավետ օգտագործվող մակերեսները, կբարձրանա դրանց բերքատվությունը.

2) արոտավայրերի բերքատվության բարձրացման հետ մեկտեղ կավելանան կենդանիների մթերատու հատկանիշները և անասնաբուժական մթերքների արտադրական ծավալները.

3) կստեղծվեն անխոչընդոտ նախադրյալներ համայնքում բուսաբուծության զարգացման համար.

4) գյուղատնտեսության ոլորտի գործունեության արդյունքում կբարձրանա բնակչության զբաղվածության մակարդակը և կավելանան եկամուտները.

5) կբացառվեն համայնքի տարածքում գյուղատնտեսական կենդանիների առանց հսկողության արածեցման դեպքերը:

8. Ծրագրի իրականացման հաջորդող տարիների ընթացքում համայնքում տարեկան կարտադրվի շուրջ 88 տոննա տավարի, 8,2 տոննա ոչխարի միս՝ կենդանի քաշով, աճի տեմպերը, համապատասխանաբար, կավելանան 20 և 15 տոկոսով:

Կարտադրվի ավելի քան 662 000 լիտր կաթ, մեկ գլուխ կովի միջին կաթնատվությունը կկազմի շուրջ 2650 լիտր, աճի տեմպը 2017 թվականի տվյալների նկատմամբ, համապատասխանաբար, կավելանա 11.9 և 10.4 տոկոսով:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 մայիսի 2018թ.

N 402-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1053-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 30-ի «Բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N1053-Ն որոշմամբ հաստատված հավելվածի աղյուսակի 3-րդ բաժնի 57-րդ և 59-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 մայիսի 2018թ.

N 403-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 451 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածի պահանջներով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 29-ի ««Զարգացման արցախյան գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը Արցախի ներդրումային հիմնադրամի վերակազմակերպելու և հիմնադրամի կանոնադրությունը հաստատելու մասին» N 451 որոշմամբ հաստատված.

1) թիվ 1 հավելվածի 26-րդ կետում «5» թիվը փոխարինել «6» թվով.

2) թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2018 թվականի մայիսի 24-ի N 403-Ն որոշման

«Հավելված 2
ԼՂՀ կառավարության 2007թ.
հոկտեմբերի 29-ի թիվ 451 որոշման

Կ Ա Ջ Մ
ԱՐՑԱՒԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՉՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

1. Արայիկ Վլադիմիրի Հարությունյան (Խորհրդի նախագահ)-Արցախի Հանրապետության պետական նախարար
2. Լևոն Ավետիսի Գրիգորյան- Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարար
3. Գրիգորի Իգորի Մարտիրոսյան-Արցախի Հանրապետության ֆինանսների նախարար
4. Սպարտակ Ապետնակի Թևոսյան - Արցախի Հանրապետության Նախագահի խորհրդական-տնտեսագիտական վարչության պետ
5. Արայիկ Լյովայի Լազարյան- Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետ-աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալ
6. Արթուր Շահենի Պետրոսյան - Արցախի Հանրապետության պետական նախարարի աշխատակազմի ղեկավար:»:

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 մայիսի 2018թ.

N 408-Ն

ք.Ստեփանակերտ

ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առ ոչ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 372 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Հարավի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում, համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 2,33 հեկտար վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 մայիսի 2018թ.

N 413-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏՈՎ
ՎԵՐԱԲՆԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՀԱՏԿԱՅՎԱԾ
ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԵՎ ՏՆԱՄԵՐԶ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱՂԻՇԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ,
ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 819-Ն ԵՎ ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 709-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 13-րդ և 73-րդ հոդվածներին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Արցախի Հանրապետությունում մշտական բնակություն հաստատած վերաբնակ ընտանիքներին վերաբնակեցման ծրագրով հատկացված բնակարանների, բնակելի տների և տնամերձ հողամասերի սեփականության իրավունքով տրամադրելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 13-ի «Լեոնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանում վերաբնակություն հաստատած ընտանիքներին հատկացված բնակելի տների և տնամերձ հողամասերի սեփականաշնորհման գործընթացը կազմակերպելու մասին» N 819-Ն և Լեոնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 27-ի «Պետական սեփականություն հանդիսացող բնակելի տները և տնամերձ հողամասերը սեփականության իրավունքով Լեոնային Ղարաբաղի Հանրապետության վերաբնակեցվող բնակավայրերում վերաբնակություն հաստատած ընտանիքներին տրամադրելու գործընթացը կազմակերպելու մասին» N 709-Ն որոշումները:

3. Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարին, Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարին և Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին՝ կազմակերպել և իրականացնել սույն որոշման 1-ին կետում նշված կարգով նախատեսված գործընթացը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

Կ Ա Ր Գ

**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՍՏԱՏՈՒ
ՎԵՐԱԲՆԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՀԱՏԿԱՑՎԱԾ
ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԵՎ ՏՆԱՄԵՐՉ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ**

1. Սույն կարգով կարգավորվում են Արցախի Հանրապետությունում մշտական բնակություն հաստատած վերաբնակ ընտանիքներին վերաբնակեցման ծրագրով Արցախի Հանրապետության կառավարության համապատասխան որոշմամբ սահմանված կարգով օգտագործման իրավունքով հատկացված պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող բնակարանները, բնակելի տները և տնամերձ հողամասերը (այսուհետ՝ բնակելի տարածություն) սեփականության իրավունքով տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Օգտագործման իրավունքով հատկացված բնակելի տարածությունը սեփականության իրավունքով վերաբնակ ընտանիքին տրամադրվում է վերաբնակ ընտանիքի չափահաս անդամներից մեկի՝ տվյալ համայնքի ղեկավարին ներկայացված գրավոր դիմումի հիման վրա:

3. Վերաբնակ ընտանիքի չափահաս անդամներից մեկը սույն կարգի 2-րդ կետով նախատեսված դիմումին կից ներկայացնում է.

1) վերաբնակ ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները.

2) վերաբնակ ընտանիքի անդամների ամուսնության (ամուսնալուծության) վկայականի պատճենը.

3) վերաբնակեցման գրքույկի պատճենը.

4) բնակելի տարածության նկատմամբ ընտանիքի օգտագործման իրավունքի գրանցման վկայականի պատճենը կամ վերաբնակիչների բնավորման (նատուրալիզացիայի) մասին և վերաբնակեցված ընտանիքին անհատական տուն-բնակարան տալու մասին պայմանագրերի (առկայության դեպքում) պատճենները.

5) Արցախի Հանրապետության համապատասխան բնակավայրում առնվազն տասը տարվա մշտական բնակությունն ու մշտական հաշվառումը հավաստող փաստաթղթերը.

6) բնակության վայրի և ընտանիքի կազմի մասին տեղեկանքը.

7) անհրաժեշտության դեպքում սույն կարգով սահմանված դրույթներին համապատասխան այլ փաստաթղթեր:

Մինչև Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 29-ի N 413-Ն որոշումն ուժի մեջ մտնելը վերաբնակ ընտանիքին օգտագործման իրավունքով հատկացված բնակելի տարածությունը սեփականության իրավունքով տրամադրելու համար կարող է ներկայացվել սույն կետի 4-րդ ենթակետում նշված փաստաթղթերից որևէ մեկը, իսկ Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մայիսի 29-ի N 413-Ն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո վերաբնակ ընտանիքին օգտագործման իրավունքով բնակելի տարածություն հատկացնելու և հետագայում սեփականության իրավունքով տրամադրելու դեպքում սույն կետի 4-րդ ենթակետում նշված բոլոր փաստաթղթերը ներկայացնելը պարտադիր է:

4. Համայնքի ղեկավարը սույն կարգի 3-րդ կետում նշված դիմումը և փաստաթղթերը ստանալուց հետո համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տարածության նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցման վկայականի պատճենի հետ միասին ներկայացնում է շրջանի վարչակազմին:

5. Շրջանի վարչակազմը սույն կարգի 4-րդ կետում նշված փաստաթղթերը ստանալուց հետո, մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա տասը, վերաբնակ ընտանիքների և սեփականաշնորհման ենթակա պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի տարածությունների վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն NN 1, 2 ձևերի, ներկայացնում է Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն (այսուհետ՝ նախարարություն)՝ դրանց առանձին կցելով նաև վերաբնակ ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթերի, պետական սեփականության իրավունքի գրանցման վկայականների պատճենները:

6. Նախարարությունն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետում ստուգում է սույն կարգի 5-րդ կետում նշված տեղեկությունների հավաստիությունը և դրանք ներկայացնում Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն (այսուհետ՝ լիազոր մարմին):

7. Լիազոր մարմինը ստուգում է սույն կարգի 5-6-րդ կետերում նշված տեղեկությունների հավաստիությունը և դրանք հաստատելուց հետո ուղարկում համապատասխան շրջանի վարչակազմ և նախարարություն՝ վերաբնակ ընտանիքներին սեփականության իրավունքով բնակելի տարածությունների տրամադրման գործընթացը կազմակերպելու համար:

8. Բնակելի տարածությունը սեփականության իրավունքով տրամադրվում է վերաբնակ ընտանիքի կազմում ընդգրկված ընտանիքի անդամներին՝ որպես ընդհանուր համատեղ սեփականություն:

9. Բնակելի տարածության նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման, նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման, անշարժ գույքի միավորի վերաբերյալ տեղեկությունների միասնական քաղվածքի (միասնական տեղեկանք) տրամադրման պետական տուրքի վճարումները կատարվում են Արցախի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՎԵՐԱԲՆԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՎ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՂԻՍԱՅՈՂ ԲՆԱԿԵԼԻ
ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Հ/Հ	Վերաբնակ ընտանիքի անդամները, ազգանունները, հայրանունները	Վերաբնակ ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթերի տվյալները	Բնակելի տարածության ծնության հասցեն	Բնակելի տարածության նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի համարը և տրման տարեթիվը	Ծանոթություն
1	2	3	4	5	6

ՇՐՋԱՆԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ _____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

_____ 20 թվական

Կ.Տ.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՎԵՐԱԲՆԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԵՎ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՂԻՍԱՅՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Հ/Հ	Վերաբնակ ընտանիքի անդամները, ազգանունները, հայրանունները	Վերաբնակ ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթերի տվյալները	Բնակելի տարածության ծնության հասցեն	Բնակելի տարածության նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի համարը և տրման տարեթիվը	Ծանոթություն
1	2	3	4	5	6

ՇՐՋԱՆԻ ՎԱՐՉԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ _____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _____ (ստորագրությունը) _____ (անունը, ազգանունը)

_____ 20 թվական

Կ.Տ.

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 մայիսի 2018թ.

N 414-Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին և Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-103-Ն հրամանագրին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ռ ջ ու մ է**.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի «Նորաստեղծ ընտանիքների համար ամուսնության նպաստ սահմանելու մասին» N 724 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման նախաբանի «ամուսնությունները» բառից առաջ, 1-ին կետում, 3-րդ կետի «արդարադատության» բառից առաջ, 4-րդ կետի «պետական» բառից առաջ, որոշմամբ հաստատված հավելվածի 1-2-րդ կետերում, 6-րդ կետի «ա» ենթակետում, 10-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերը և դրանց հոլովաձևերը փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերով և դրանց հոլովաձևերով.

2) որոշման 3-5-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերով.

3) որոշման 6-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի ղեկավարներին, Ստեփանակերտի քաղաքապետին» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարին» բառերով.

4) որոշմամբ հաստատված հավելվածի՝

ա. 3-րդ կետում «սոցիալական ծառայություններ տրամադրող մարմին» բառերը փոխարինել « Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության (այսուհետ՝ լիազոր մարմին) աշխատակազմի սոցիալական ծառայության տարածքային գործակալություն» բառերով.

բ. 3-րդ կետի «բ» ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«բ) հանրային ծառայությունների համարանիշը և դրա պատճենը կամ վավեր սոցիալական ապահովության քարտը և դրա պատճենը կամ Արցախի Հանրապետության ոստիկանության կողմից տրված հանրային ծառայությունների համարանիշ չստանալու մասին տեղեկանքը»,

գ. 6-րդ կետի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (այսուհետ՝ լիազոր մարմին)» բառերը փոխարինել «լիազոր մարմին» բառերով, իսկ «բ» ենթակետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի» բառերը «Արցախի Հանրապետության ֆինանսների» բառերով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2009 թվականի հուլիսի 30-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցելու հետևանքով, ինչպես նաև ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների նպաստառու երեխաներին միանվագ դրամական օգնություն տրամադրելու մասին» N 464-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման վերնագրում, 1-ին կետի «պաշտպանության» բառից առաջ, «պետական բյուջեի» բառերից առաջ, 2-րդ կետի «ֆինանսների» բառից առաջ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության» բառերով.

2) որոշման 2-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման» բառերով:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2010 թվականի ապրիլի 16-ի «Հինգ և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքի համար բնակարան կամ բնակելի տուն գնելու կամ բնակելի տուն կառուցելու կարգը հաստատելու մասին» N 194-Ն որոշմամբ հաստատված հավելվածի՝

1) 2-րդ, 4-րդ կետերում, 10-րդ կետի «մասին» բառից հետո, 11-13-րդ կետերում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերով և դրանց հոլովածներով.

2) 6-րդ կետի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի (Մտեփանակերտի քաղաքապետարանի) սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմին (այսուհետ՝ տարածքային մարմին)» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի սոցիալական ծառայության տարածքային գործակալություն (այսուհետ՝ գործակալություն)» բառերով, իսկ 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) իրենց և երեխաների հանրային ծառայությունների համարանիշների կամ վավեր սոցիալական ապահովության քարտերի պատճենները, իսկ հանրային ծառայությունների համարանիշներ չունենալու դեպքում՝ Արցախի Հանրապետության ոստիկանության կողմից տրված՝ հանրային ծառայությունների համարանիշներ չստանալու մասին տեղեկանքների պատճենները.».

3) 6-րդ կետի 2-րդ պարբերությունում, 7-րդ կետում «տարածքային մարմին» բառերը և դրանց հոլովածները փոխարինել «գործակալություն» բառով և դրա հոլովածներով.

4) 8-րդ կետում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերը (Ստեփանակերտի քաղաքապետարանը) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի» բառերը փոխարինել «գործակալությունները» բառով.

5) 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Բնակարան կամ բնակելի տուն գնվում կամ բնակելի տուն կառուցվում է սույն կարգի 8-րդ կետում նշված հայտերը նախարարության կողմից ամփոփվելուց հետո՝ Արցախի Հանրապետության կառավարության որոշման հիման վրա»:

6) NN 1, 2 ձևերում «Սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության աշխատակազմի սոցիալական ծառայության տարածքային գործակալության» բառերով.

7) N 1 ձևի՝

ա. 1-ին աղյուսակի «Սոցիալական քարտի» բառերը փոխարինել «Վավեր սոցիալական ապահովության քարտի» բառերով,

բ. 2-րդ աղյուսակի 6-րդ տողում «Սոցիալական քարտերի» բառերը փոխարինել «Վավեր սոցիալական ապահովության քարտերի» բառերով,

գ. 2-րդ աղյուսակի 8-րդ տողում «չունենալու վերաբերյալ» բառերը փոխարինել «չստանալու մասին» բառերով.

8) N 2 ձևում «Անձնագր(երի)ի» բառը փոխարինել «Անձնագր(եր)ի» բառով, «Սոցիալական քարտ(երի)ի» բառերը՝ «Վավեր սոցիալական ապահովության քարտ(եր)ի» բառերով, իսկ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանի ղեկավարի (Ստեփանակերտի քաղաքապետի)» բառերը՝ «Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության աշխատակազմի սոցիալական ծառայության տարածքային գործակալության պետի» բառերով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 մայիսի 2018թ.

N 415-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇՏՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 99-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Արցախի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 370-Ն որոշման N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի փետրվարի 12-ի «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված գյուղատնտեսական ծրագրերի և միջոցառումների մասին» N 99-Ա որոշմամբ հաստատված հավելվածի

- 1) 1-ին կետում և 1-ին կետի 1-ին տողում «31 809,6» թիվը փոխարինել «32 554,1» թվով.
- 2) 2-րդ կետում «20 560,1» թիվը փոխարինել «21 798,5» թվով.
- 3) 2-րդ կետի 2-րդ տողում «12 493,3» թիվը փոխարինել «13 731,7» թվով.
- 4) 3-րդ կետում «75 308,0» թիվը փոխարինել «73 325,1» թվով.
- 5) 3-րդ կետի 1-ին տողում «66 000,0» թիվը փոխարինել «64 017,1» թվով:

3. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2018 թվականի մայիսի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ
ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2
ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար ՀՀ դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՄԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝				
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	-	-	-
	2		Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և որսորդություն	-	-	-	-
		1	Գյուղատնտեսություն	-	-	-	-
		02	Պետական աջակցություն «Բույսերի պաշտպանության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը	-	93.1	372.3	744.5
			ԱՀ գյուղատնտեսության նախարարություն	-	93.1	372.3	744.5
		03	Մշակաբույսերի սերմերի որակի ստուգման և սորտափորձարկման գծով պետական պատվեր	-	154.8	619.2	1 238.4
			ԱՀ գյուղատնտեսության նախարարություն	-	154.8	619.2	1 238.4
		04	Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում	-	(247.9)	(991.5)	(1 982.9)
			ԱՀ գյուղատնտեսության նախարարություն	-	(247.9)	(991.5)	(1 982.9)

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿՎԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 մայիսի 2018թ.

N 420-Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N 82-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ս ք ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 18-ի «Մշակութային և երիտասարդական միջոցառումների մասնակիցների սննդի ու գիշերավարձի օրական վճարման չափերը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի մարտի 13-ի թիվ 150 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 82-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Մնուկ /դրամ/		Գիշերավարձ /դրամ/	
		առձեռն	հյուրա-նոցում	առձեռն	հյուրա-նոցում
1.	Մշակութային միջոցառումներ				
	Մասնակիցներ (Արցախի Հանրապետության տարածքում)	մինչև 2000	մինչև 3000	մինչև 2000	մինչև 8000
	Հրավիրվածներ Հայաստանի Հանրապետությունից և արտերկրից	մինչև 3000	մինչև 4000	մինչև 5000	մինչև 20000
2.	Երիտասարդական միջոցառումներ				
	Պատանիներ, երիտասարդներ և մեծահասակներ (Արցախի Հանրապետության տարածքում)	մինչև 2000		մինչև 3000	
	Հրավիրվածներ Հայաստանի Հանրապետությունից և արտերկրից	մինչև 3000	մինչև 4000	մինչև 5000	մինչև 15000
3.	Հայաստանի Հանրապետությունում մշակութային և երիտասարդական միջոցառումներին մասնակցության համար	մինչև 6000		մինչև 5000	մինչև 20000
4.	Արտերկրում մշակութային և երիտասարդական միջոցառումներին մասնակցության համար	մինչև 20000		մինչև 25000	

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2018 թվականի ապրիլի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 մայիսի 2018թ.

N 421-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՐՏԻ 1-Ի N 135-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ռ ր ո շ ու մ է**.

1. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 1-ի «Արցախի Հանրապետության Նախագահի 2018 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի մասին» N 135-Ն որոշման հավելվածի 50-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

1 հունիսի 2018թ.

N 426-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ա շ ա մ է**:

1. Արցախի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 29-ի «Արցախի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 370-Ն որոշման N2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2018 թվականի ապրիլի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 370-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազ.դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	-	-	-	-
			այդ թվում՝				
03			ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	-	(30 000,0)	-	-
	3		Դատական գործունեություն և իրավական պաշտպանություն	-	(30 000,0)	-	-
		2	Իրավական պաշտպանություն	-	(30 000,0)	-	-
		01	Քաղաքացիներին և իրավաբանական անձանց պատճառված վնասի և այլ պարտավորությունների հատուցման ելթակա ծախսեր	-	(30 000,0)	-	-
			ԱՀ ֆինանսների նախարարություն	-	(30 000,0)	-	-
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	14 951,2	39 995,0	-
	9		Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-	14 951,2	39 995,0	-
		1	Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)	-	14 951,2	39 995,0	-
		02	Նյութական ռեսուրսների ԱՀ պետական պահուստի ձևավորում և պահպանում	-	(50 000,0)	-	-
			ԱՀ արտակարգ իրավիճակների պետական ծառայություն	-	(50 000,0)	-	-
		04	Ընթացիկ նորոգման, բարեկարգման և կոմունալ տնտեսության գծով ԱՀ շրջանների կադրողությունների զարգացման ծախսեր	-	64 951,2	39 995,0	-
			Ասկերանի շրջանի վարչակազմ	-	19 481,2	18 200,0	-
			Մարտունու շրջանի վարչակազմ	-	45 470,0	21 795,0	-
06			ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՍՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	(64 951,2)	(39 995,0)	-
	3		Զրամատակարարում	-	(64 951,2)	(39 995,0)	-
		1	Զրամատակարարում	-	(64 951,2)	(39 995,0)	-
		01	Խմելու և ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների սուբսիդավորում	-	(64 951,2)	(39 995,0)	-
			ԱՀ կառավարություն	-	(64 951,2)	(39 995,0)	-
10			ՍՈՑԻԱԼԱԿԱՆ	-	(25 000,0)	-	-

			ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ				
4			Ընտանիքի անդամներ և զավակներ	-	(25 000,0)	-	-
	1		Ընտանիքի անդամներ և զավակներ	-	(25 000,0)	-	-
		16	Քաղաքացիների խնայողությունների ինդեքսավորման ծախսեր	-	(25 000,0)	-	-
			ԱՀ ֆինանսների նախարարություն	-	(25 000,0)	-	-
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆԵՐԻՆ	-	105 000,0	-	-
	1		Պետական բյուջեի և համայնքների պահուստային ֆոնդեր	-	160 000,0	-	-
		1	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	160 000,0	-	-
		01	Պետական բյուջեի պահուստային ֆոնդ	-	160 000,0	-	-
			ԱՀ կառավարություն	-	160 000,0	-	-
2			Այլ ծախսեր	-	(55 000,0)	-	-
	1		Այլ ծրագրեր	-	(55 000,0)	-	-
		03	Հանրապետական միջոցառումների (միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ) իրականացման ծրագրեր	-	(50 000,0)	-	-
			ԱՀ կառավարություն	-	(50 000,0)	-	-
		04	Հատուկ նպատակների ծախսեր	-	35 000,0	-	-
			ԱՀ կառավարություն	-	35 000,0	-	-
		06	Գույքի գնման ծախսեր	-	100 000,0	50 000,0	-
			ԱՀ կառավարություն	-	100 000,0	50 000,0	-
		07	Նախորդ տարիներից առաջացած պարտքերի մարում	-	(140 000,0)	(50 000,0)	-
			ԱՀ կառավարություն	-	(140 000,0)	(50 000,0)	-

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԶՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

1 հունիսի 2018թ.

N 428-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առաջում է**:

1. Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի վարչական սահմաններում՝ Ստեփանակերտ քաղաքի Կամո 2-րդ նրբանցք N 4/50 հասցեում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության 0,01157 հեկտար էներգետիկայի օբյեկտների հողերը, համաձայն հավելվածի, փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ խառը կառուցապատման հողերի:

2. Առաջարկել Ստեփանակերտի քաղաքապետին՝ ապահովել հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերության գանձումը, եթե հողամասի նպատակային նշանակության փոփոխումից հետո դրա կադաստրային արժեքն ավելի բարձր է, քան մինչև փոփոխումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ
ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ № 13-Ն

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ, ԳՈՒՅՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՇԵՆՔԻ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ՏԱՐԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության դատական օրենսգրքի 81-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության դատական օրենսգրքի 148-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 161-րդ հոդվածի 1-ին մասը, Արցախի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հաստատել Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում հասարակական կարգի պահպանման և անվտանգության ապահովման, գույքի, ինչպես նաև շենքի և դրա սպասարկման տարածքի պահպանության կարգը՝ համաձայն հավելվածի:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ
ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ն.ՆԱՐԻՄԱՆՅԱՆ

**16 մայիսի 2018թ.
ք. Ստեփանակերտ**

ԿԱՐԳ

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ
ԵՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԻ
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ, ԳՈՒՅՔԻ, ԻՆՉՊԵՍ ԱՆԵՎ
ՇԵՆՔԻ ԵՎ ԴՐԱ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ**

Մույն կարգով սահմանվում են «Արցախի Հանրապետության դատական դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի (այսուհետ՝ Դեպարտամենտ) կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում հասարակական կարգի պահպանման և անվտանգության ապահովման, գույքի, ինչպես նաև շենքի և դրա սպասարկման տարածքի (այսուհետ՝ Պահպանվող տարածք) պահպանության միջոցառումները, դատավորների, Դեպարտամենտի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատողների (այսուհետ՝ Աշխատողներ) և այցելուների մուտքի-ելքի կարգը, ինչպես նաև Պահպանվող տարածք մուտք գործող անձանց և նրանց իրերը գննության ենթարկելու գործընթացի հետ կապված հարաբերությունները:

Մույն կարգի սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել Պահպանվող տարածքի հուսալի պահպանությունը, դատավորների, դատավարության մասնակիցների, Աշխատողների և այլ անձանց կյանքի, առողջության և արժանապատվության, իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը հանցավոր և հակաիրավական այլ ոտնձգություններից, հասարակական կարգի պահպանումը և անվտանգությունը, ինչպես նաև կանխել Պահպանվող տարածք մուտք գործող անձանց ոչ իրավաչափ վարքագիծը:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Պահպանվող տարածքում հասարակական կարգի պահպանումը, անվտանգության ապահովումն ու պահպանությունն իրականացվում է Արցախի Հանրապետության դատական կարգադրիչների ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) միջոցով:

1.2. Պահպանվող տարածքի պահպանությունն իրականացվում է շուրջօրյա ռեժիմով՝ պահակակետերի միջոցով:

1.3. Պահպանվող տարածք էլքի-մուտքի կանոնների պահպանման նկատմամբ ընդհանուր հսկողությունն իրականացնում են՝

Դեպարտամենտի կառուցվածքային ստորաբաժանումներում՝ Դեպարտամենտի ղեկավարի տեղակալը, Ծառայության պետը,

Դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանումներում՝ ստորաբաժանման ղեկավարները, Ծառայության պետը:

1.4. Պահպանվող տարածքում հասարակական կարգի պահպանումը և անվտանգության ապահովումը, ինչպես նաև պահպանությունը լիարժեք իրականացնելու համար սահմանվում են բաց և փակ գոտիներ:

1.4.1. Պահպանվող տարածքի փակ գոտին իր մեջ ներառում է արգելված և սահմանափակ գոտիներ:

1.4.2. Պահպանվող տարածքի բաց գոտում գտնվում են գրասենյակը, դատական նիստերի դահլիճները, ինչպես նաև սպասարանները:

1.4.3. Պահպանվող տարածքի արգելված գոտում գտնվում են դատական նիստերի մասնակցության համար դատարան բերվող կալանավորների և ժամանակավոր արգելանքի վերցված անձանց կալանախցերը:

1.4.4. Պահպանվող տարածքների սահմանափակ գոտիներում ընդգրկված են բաց և արգելված գոտիներում չընդգրկված մյուս տարածքները:

1.5. Մույն կարգի նպատակն ապահովելու համար գննության են ենթարկվում Պահպանվող տարածք մուտք գործող անձինք և նրանց իրերը:

1.6. Մույն կարգի իմաստով գննությունը դատական կարգադրիչի (այսուհետ՝ Կարգադրիչ) կողմից Պահպանվող տարածք մուտք գործող անձանց և նրանց իրերի տեխնիկական միջոցներով կամ այլ եղանակներով (տեսողական, լսողական, հոտառության զգայարաններով և այլն) ուսումնասիրումն է, որը Կարգադրիչին հնարավորություն է ընձեռնում համոզվել անձի մոտ սույն կարգի իմաստով արգելված իրերի բացակայության վերաբերյալ:

Զննության ընթացքում արգելվում է Կարգադրիչի կողմից որոնողական կամ այնպիսի գործողությունների իրականացումը, որոնք կխեղաթուրեն սույն կարգով սահմանված գննության էությունը կամ այն կվերածեն խուզարկության:

Այն անձանց և նրանց իրերի գննությունը, որոնց մոտ կարող են առկա լինել որոշակի գաղտնիք պարունակող փաստաթղթեր (նախաքննական, փաստաբանական և այլն), անհրաժեշտ է կազմակերպել այնպես, որ Կարգադրիչը չծանոթանա գաղտնիք պարունակող փաստաթղթերի բովանդակությանը:

1.7. Կարգադրիչը Պահպանվող տարածք մուտք գործող անձանց և նրանց իրերը գննության ենթարկելու գործառնություն իրականացնելիս պարտավոր է խստագույնս պահպանել օրինականության, անձի իրավունքների և ազատությունների, պատիվն ու արժանապատվությունը հարգելու, մարդասիրության և թափանցիկության սկզբունքները:

1.8. Պահպանվող տարածք մուտք գործող անձանց գննությունն իրականացվում է համապատասխան սեռի Կարգադրիչի կողմից: Համապատասխան սեռի Կարգադրիչի բացակայության դեպքում գննությունը կարող է իրականացվել համապատասխան սեռի դատական ծառայողի կողմից:

1.9. Զննությունից հրաժարվող անձի մուտքը Պահպանվող տարածք արգելվում է:

2. ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔ ՄՈՒՏՔԻ ԵՎ ԵՆ ԿԱԿԱՆԱՎՈՂ ՄԱՍԻՆ

(ԱՆՑԱԳՐԱՅԻՆ ՌԵՇԻՄ)

2.1. Մուտքի-ելքի կանոնները տարածվում են Պահպանվող տարածք մուտք գործող բոլոր անձանց վրա:

2.2. Ակնհայտ ոչ սթափ վիճակում Պահպանվող տարածք մուտք գործելն արգելվում է:

2.3. Մարդկանց մուտքը Պահպանվող տարածք իրականացվում է պահակակետերով կահավորված մուտքերով: Ծառայողական մուտքերն օգտագործվում են միայն դատավորների և Աշխատողների համար:

2.4. Պահպանվող տարածք մուտքը-ելքն իրականացվում է համապատասխան թույլտվության փաստաթղթերով: Մուտքի-ելքի թույլտվություն տվող փաստաթղթերն են՝ սահմանված կարգի ծառայողական վկայականները, անցագրերը, հայտ-ցուցակները: Մուտքի ժամանակ ծառայողական վկայականները ներկայացվում են Կարգադրիչին բացված վիճակում: Եթե Պահպանվող տարածքի մուտքերը կահավորված են համապատասխան սարքավորումներով, դատավորները և Աշխատողները մուտքի ժամանակ օգտվում են պլաստիկ քարտերից:

2.5. «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» ԼՂՀ օրենքով պետական պահպանության օբյեկտ հանդիսացող

անձանց մուտքը Պահպանվող տարածք իրականացվում է անարգել: Անարգել մուտքի իրավունք ունեն նաև նշված անձանց անվտանգության աշխատակիցները:

Արցախի Հանրապետության օրենսդիր և գործադիր իշխանության բարձրագույն պաշտոնատար անձանց ու ՀԱԵ Արցախի թեմի առաջնորդի մուտքը սահմանափակ գոտի կազմակերպվում է դիմավորելու և ուղեկցելու միջոցով:

2.6. Ծառայողական վկայականներով Պահպանվող տարածք մուտքը թույլատրվում է Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներին, Բարձրագույն դատական խորհրդի իրավաբան անդամներին, պետական նախարարին, նախարարներին և նրանց տեղակալներին, պետական կառավարման այլ մարմինների ղեկավարներին և նրանց տեղակալներին, գլխավոր դատախազին և նրա տեղակալներին, հաշվեքննիչ պալատի նախագահին, Մարդու իրավունքների պաշտպանին, Արցախի Հանրապետության օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինների ղեկավարներին:

2.7. Պահպանվող տարածքի բաց գոտիներ մուտքն ազատ է դատարան այցելող բոլոր անձանց համար՝ անձը հաստատող փաստաթղթի ներկայացման դեպքում:

2.8. Պահպանվող տարածքի արգելված գոտի մուտք գործելու իրավունք ունեն սահմանված կարգով կալանավորվածների ուղեկցումն իրականացնող ոստիկանության աշխատակիցները և Կարգադրիչները:

Անհրաժեշտության դեպքում Ծառայության պետի թույլտվությամբ արգելված գոտի մուտք կարող են գործել նաև անհրաժեշտ բուժօգնություն ցուցաբերող անձինք՝ Կարգադրիչի անմիջական ուղեկցությամբ: Տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողները նույնպես մուտք են գործում Կարգադրիչի ուղեկցությամբ:

2.9. Պահպանվող տարածքի սահմանափակ գոտի մուտք գործելու իրավունք ունեն դատավորները, Դեպարտամենտի ղեկավարը, նրա տեղակալը, տվյալ կառուցվածքային կամ առանձնացված ստորաբաժանման աշխատողները և սույն կանոններով սահմանված կարգով համապատասխան թույլտվության փաստաթուղթ ունեցող անձինք:

2.10. Պահպանվող տարածքի սահմանափակ գոտի այցելուներին միանգամյա անցագիր տրամադրվում է Կարգադրիչի կողմից՝ ընդունողի բանավոր թույլտվությամբ: Անհրաժեշտության դեպքում կարող է տրամադրվել նաև գրավոր հայտ:

2.11. Դեպարտամենտի կառուցվածքային ստորաբաժանումների սահմանափակ գոտի այցելուների համար մուտքի թույլտվություն պահանջելու իրավունք ունեն Դեպարտամենտի ղեկավարը, Դեպարտամենտի ղեկավարի տեղակալը, Ծառայության պետը, Դեպարտամենտի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև Դեպարտամենտի ղեկավարի քարտուղարը՝ Դեպարտամենտի ղեկավարի հանձնարարությամբ:

2.12. Դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանումների սահմանափակ գոտի այցելուների համար մուտքի թույլտվություն պահանջելու իրավունք ունեն դատավորները, Դեպարտամենտի առանձնացված ստորաբաժանման ղեկավարը, դատարանի նախագահի խորհրդականը, ինչպես նաև դատավորի օգնականը՝ դատավորի հանձնարարությամբ:

2.13. Սույն կարգի 2.11 և 2.12 կետերում հիշատակված պաշտոնատար անձանց բացակայության դեպքում, նրանց փոխարինող պաշտոնատար անձինք իրավունք ունեն իրականացնել նշված գործառնությունները:

2.14. Կազմակերպվող խորհրդակցություններին և այլ միջոցառումներին մասնակցելու համար հրավիրված անձանց ցուցակները կազմակերպողների կողմից տրվում են Կարգադրիչին, ոչ ուշ, քան խորհրդակցությունը կամ միջոցառումն սկսվելուց երկու ժամ առաջ:

2.15. Ուսումնական հաստատությունների կողմից ուսումնական պրակտիկայի գործուղված ուսանողների մուտքը Պահպանվող տարածքի սահմանափակ գոտի թույլատրվում է ուսանողական տոմսերով՝ դատարանի նախագահի կամ առանձնացված ստորաբաժանման ղեկավարի կողմից ստորագրված հայտ-ցուցակի համաձայն:

2.16. Այցելուի մուտքը Պահպանվող տարածքի սահմանափակ գոտի արգելվում է առանց անձր հաստատող փաստաթղթի:

2.17. Պահպանվող տարածքի սահմանափակ գոտի մուտք գործելու և անցագիր ստանալու համար անձի ինքնությունը հաստատող փաստաթղթեր կարող են լինել՝

ա) Արցախի Հանրապետության քաղաքացիների համար՝

- անձնագիրը,

- նույնականացման քարտը,

- զինվորական գրքույկը,

- վարորդական իրավունքի վկայականը,

- պետական մարմինների աշխատակիցների համար ծառայողական վկայականը,

- Արցախի Հանրապետության ոստիկանության մարմինների կողմից ժամանակավորապես տրվող անձի ինքնությունը հաստատող փաստաթուղթը,

- մինչև 16 տարեկան երեխաների համար՝ նաև ծննդյան վկայականը,

բ) փախստականների համար՝

- փախստականի վկայականը,

- փախստականի ճամփորդական փաստաթուղթը,

գ) օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար՝

- օտարերկրյա պետության անձնագիրը,

- անձի ինքնությունը հաստատող միջազգայնորեն ճանաչված փաստաթղթերը,

- Արցախի Հանրապետության հատուկ անձնագիրը,

- Արցախի Հանրապետության կացության քարտը:

2.18. Ընդունողի հայտի կամ բանավոր ցուցումի հիման վրա Կարգադրիչը լրացնում է միանգամյա մուտքի անցագիր:

2.19. Միանգամյա մուտքի անցագիրը հաշվառման ենթակա միասնական ձևի փաստաթուղթ է (ձև 1), որն իր մեջ ներառում է այցելուի անունը, ազգանունը, նրա կողմից ներկայացված փաստաթղթի անվանումը, ընդունողի պաշտոնը, անունը, ազգանունը, այցելուի մուտք գործելու օրը, ժամը, ինչպես նաև այցելության ավարտի ժամը:

Այցելության ավարտի ժամը նշվում է ընդունողի կողմից և հավաստվում նրա ստորագրությամբ:

2.20. Պահակակետում Կարգադրիչի կողմից վարվում է այցելուների մուտքի և ելքի գրանցման մատյան (ձև 2), որտեղ նշվում են միանգամյա մուտքի անցագրի հաշվառման համարը, տվյալներ այցելուների անվան, ազգանվան, անձր հաստատող փաստաթղթի անվանման և համարի, սահմանափակ գոտի մուտքի և ելքի օրվա, ժամի, թույլտվություն տվող անձի պաշտոնի, ինչպես նաև ընդունելությունից հետո այցելուի կողմից միանգամյա մուտքի անցագիրն անցագրային կետ հանձնելու ժամի մասին:

2.21. Պահպանվող տարածքներից նյութական միջոցները դուրս են բերվում Դեպարտամենտի կամ առանձնացված ստորաբաժանման ղեկավարի կողմից ստորագրված գույքի և նյութական միջոցների դուրս բերման անցագրի (ձև 3) հիման վրա, որն իր մեջ ներառում է դուրս բերողի պաշտոնը, անունը, ազգանունը, դուրս բերվող գույքի անվանումը, տեսակը և քանակը, դուրս բերելու նպատակը և ժամկետները, թույլատվություն տվող անձի պաշտոնը, անունը, ազգանունը, որը հավաստվում է նրա ստորագրությամբ:

Պահակակետի հերթապահ Կարգադրիչն անցագրի հակառակ կողմում կատարում է նշում նյութական միջոցների և այն դուրս տանելու ժամի մասին:

2.22. Պահպանվող տարածքի պահակակետերում հավաքված մուտքի միանգամյա և նյութական միջոցներ դուրս բերելու վերաբերյալ անցագրերն, ինչպես նաև պահպանվող տարածք մուտք գործած անձանց գրանցման մատյանները պահվում են պահակակետում և դրանց հանձնումից ու նոր գրանցման մատյանի վարումից մեկ

տարի հետո ոչնչացվում են սույն կանոնների պահպանության նկատմամբ ընդհանուր հսկողություն իրականացնող համապատասխան պաշտոնատար անձանց կողմից:

2.23. Դատավորները, Դեպարտամենտի ղեկավարը, նրա տեղակալը, կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարները կարող են մտնել և գտնվել Պահպանվող տարածքում օրվա ցանկացած ժամին: Մյուս բոլոր աշխատողների մուտքը ոչ աշխատանքային ժամերին և օրերին թույլատրվում է համաձայն հերթապահության ժամանակացույցի, ինչպես նաև կառուցվածքային կամ առանձնացված ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացված հայտերով՝ նշելով գտնվելու ժամանակը և աշխատասենյակը:

2.24. Պահպանվող տարածքի փակ բակեր թույլատրվում է մտնել միայն դատավորների, դեպարտամենտի ղեկավարի, դատական ծառայողների, ինչպես նաև ձեռքհասկալիների և կալանավորներին տեղափոխող մեքենաները:

Այն դեպքում, երբ փակ բակերի մեծությունը չի կարող սպասարկել նշված անձանց մեքենաներին, ապա թույլատրվում է մտնել միայն դատավորների, Դեպարտամենտի ղեկավարի, նրա տեղակալի, Դեպարտամենտի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների և կալանավորներին տեղափոխող մեքենաներին:

2.25. Պահպանվող տարածքներ մուտքի և ելքի կանոնները խախտող անձի նկատմամբ կիրառվում են օրենքով նախատեսված միջոցներ:

3. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ, ԶՆՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼԸ

3.1. Մարդկանց, տրանսպորտային միջոցների մուտքը-ելքը վերահսկելու նպատակով Պահպանվող տարածքը կարող է կահավորվել վերահսկողության համակարգով (մուտքի վերահսկողության և կառավարման համակարգ, տեսահսկում և ազդանշանային համակարգ):

3.2. Մուտքի իրավունք ունեցող անձանց թույլատրվում է իրենց հետ ներս բերել ամենօրյա կենցաղային իրեր (պայուսկաներ, թղթապանակներ և փաթեթներ):

3.3. Արգելվում է Պահպանվող տարածք ներս բերել պայթուցիկ նյութեր, հրավտանգ, թունավոր և հոգեերգործուն նյութեր, հրազեն և սառը զենք, հատուկ միջոցներ, ինչպես նաև այլ առարկաներ՝ որոնց կիրառումը կարող է մարդկանց համար վտանգավոր լինել (այսուհետ՝ Արգելվող իրեր):

Այս դրույթը՝ հրազենի, զինամթերքի և հատուկ միջոցների մասով, չի վերաբերվում այն դատավորներին, որոնք կրում են հաշվեցուցակային զենք, Պահպանվող տարածքի պահպանությունն իրականացնող աշխատակիցներին, ձեռքհասկալիներին և կալանավորներին տեղափոխող ոստիկանության աշխատողներին, ինչպես նաև ֆելդեգերական ծառայության աշխատակիցներին:

3.4. Հրազենի կիրառման, պայթուցիկների կանխարգելման նպատակով Պահպանվող տարածքի մուտքերը պետք է կահավորված լինեն ստացիոնար կամ ձեռքի մետաղորսիչներով (այսուհետ՝ Տեխնիկական միջոցներ):

3.5. Արգելված իրերի ներս բերումը կանխարգելելու նպատակով Պահպանվող տարածք մուտք գործող անձինք պետք է ենթարկվեն զննման Տեխնիկական միջոցների կիրառմամբ, իսկ Կարգադրիչի պահանջով իրենց հետ բերված իրերը ներկայացնել տեսողական զննման:

3.6. Կարգադրիչը զննությունն իրականացնելուց առաջ անձին առաջարկում է ազատվել այն իրերից, որոնք սույն կարգի իմաստով համարվում կամ կարող են համարվել Արգելվող իրեր:

3.7. Պահպանվող տարածք մուտք գործելիս Կարգադրիչը զգուշացնում է այցելուներին նրանց մոտ առկա հաշվեցուցակային զենքը և զինամթերքը հանձնել պահակակետ՝ այդ նպատակով հատուկ կահավորված համապատասխան պահարաններում պահելու համար:

3.8. Զենքի և զինամթերքի հանձնումը գրանցվում է դրա համար նախատեսված մատյանում (ձև 4), որի համար տրվում է սահմանված նմուշի կտրոն (ձև 5):

3.9. Եթե Պահպանվող տարածք մուտք գործող անձանց և նրանց իրերի զննության ժամանակ տեխնիկական միջոցներն արձակում են համապատասխան ազդանշան, ապա Կարգադրիչը զննության ենթարկված անձին առաջարկում է ազատվել այն իրերից, որոնք սույն կարգի իմաստով համարվում կամ կարող են համարվել Արգելվող իրեր, ինչպես նաև առիթ են հանդիսանում տեխնիկական միջոցների համար արձակելու համապատասխան ազդանշան:

3.10. Եթե զննության ենթարկված անձը հրաժարվում է կատարել սույն կարգի 3.9 կետում նշված գործողությունները և ցանկանում է մուտք գործել Պահպանվող տարածք, ապա Կարգադրիչի կողմից առաջարկվում է ներկայացնել այն իրերը, որոնք առիթ են հանդիսանում տեխնիկական միջոցների համար արձակելու համապատասխան ազդանշան, և կրկին ենթարկվել զննության: Միաժամանակ անձը տեղեկացվում է վարչական շեղում առանձին սենյակում զննության ենթարկվելու հնարավորության մասին:

3.11. Եթե զննության ենթարկված անձը սույն կարգի 3.9 կետում նշված գործողությունները կատարելուց հետո ենթարկվում է կրկնակի զննության և տեխնիկական միջոցները կրկին արձակում են ազդանշան, ապա Կարգադրիչի կողմից առաջարկվում է ներկայացնել այն իրերը, որոնք առիթ են հանդիսանում տեխնիկական միջոցների համար արձակելու համապատասխան ազդանշան, և կրկին ենթարկվել զննության:

3.12. Զննության ենթարկված անձի կողմից տեխնիկական միջոցների համար ազդանշան արձակելու առիթ հանդիսացած կամ Կարգադրիչի մոտ հիմնավոր կասկած առաջացրած իրերը ներկայացնելուց հետո, եթե Կարգադրիչը համոզվում է դրանց՝ սույն կարգի իմաստով Արգելվող համարվող իրեր չհանդիսանալու հանգամանքի մեջ, ապա ապահովում է նրա անարգել մուտքը Պահպանվող տարածք:

3.13. Այցելուի մոտ առանց դրա համար հատուկ թույլտվության հրազենի, հատուկ միջոցների և (կամ) այլ արգելված իրերի հայտնաբերման, կամ Պահպանվող տարածքի ներսում գտնվող անձանց կողմից հասարակական կարգի խախտման դեպքեր հայտնաբերելու դեպքում, Կարգադրիչը նրանց վերցնում է արգելանքի տակ և անհապաղ հանձնում ոստիկանության աշխատակիցներին՝ Կարգադրիչի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Պատահարի մասին Կարգադրիչը զեկուցում է անցագրային ռեժիմի համար պատասխանատու պաշտոնատար անձին:

3.14. Զննության ենթարկված անձի մոտ սույն կարգի իմաստով Արգելվող համարվող իրեր չհայտնաբերելու դեպքում Կարգադրիչն ապահովում է նրա անարգել մուտքը Պահպանվող տարածք:

3.15. Առանձին սենյակում զննություն կատարելու դեպքում, զննության գործընթացին կարող է հրավիրվել ընթերակա:

3.16. Անհրաժեշտության կամ զննությունից հրաժարված կամ կրկնակի զննության ենթարկված անձի պահանջի դեպքում այդ մասին Կարգադրիչը կազմում է արձանագրություն (Ձև 6), որում իր նկատառումները կարող է ներկայացնել համապատասխան անձը և ստորագրել այն (ընթերակայի մասնակցության դեպքում արձանագրությունը ստորագրվում է նաև նրա կողմից): Արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու դեպքում Կարգադրիչն արձանագրության մեջ այդ մասին կատարում է գրառում: Արձանագրությունը կազմվում է երկու օրինակից, որից մեկը հանձնվում է զննությունից հրաժարված կամ զննության ենթարկված անձին, իսկ մյուսը՝ պահվում է Ծառայությունում:

Դատավարությանը մասնակցող անձանց պարագայում արձանագրությունը կազմվում է երեք օրինակից, որի մեկ օրինակը հանձնվում է այն դատավորին, որի վարությամբ է գտնվում համապատասխան դատական գործը:

4. ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔ ԵՆԴՍ ԲԵՐԵԼՆ ԱՐԳԵԼՎՈՂ ԻՐԵՐԻ ՑԱՆԿԸ

4.1. Պահպանվող տարածք մուտք գործող անձանց արգելվում է ներս բերել հետևյալ իրերը.

4.1.1. Ձենք՝

ա) ցանկացած առարկա, որն ի վիճակի է կրակ արձակելու և վնաս պատճառելու, այդ թվում՝ բոլոր հրաձգային զենքերը (ատրճանակ, ռեվոլվեր, հրացան, կարճափող զենք և այլն),

բ) հրազենային զենքի կրկնօրինակներ կամ նմանակումներ,

գ) հրազենային զենքի առանձին մասեր,

դ) գազային զենք,

ե) պնևմատիկ ատրճանակ, հրացան և գնդիկավոր հրացան,

զ) ազդանշանային ատրճանակ,

է) մեկնարկային ատրճանակ,

ը) բոլոր տիպի խաղալիք ատրճանակներ,

թ) գնդակ նետելու հարմարանքներ,

ժ) մեխ և պտուտակ ամրացնելու արդյունաբերական սարք,

ժա) արբալետ, նիզակ,

ժբ) բթացնող կամ հարվածող սարք,

ժգ) հրազենային զենքի տեսքով պատրաստված կրակայրիչ,

ժդ) էլեկտրաշոկային սարքեր:

4.1.2. Կտրող, ծակող զենք և սուր առարկաներ՝

ա) կացին, նետ, մաչետե,

բ) ցանկացած երկարության շեղքով բացովի կամ ծալովի դանակ,

գ) ցանկացած երկարության սայրով մետաղյա կամ որպես պոտենցիալ զենք օգտագործվելու համար ցանկացած այլ ամուր նյութից պատրաստված դանակ,

դ) բաց ածելի և շեղք,

ե) սուր, թուր,

զ) մկրատ,

է) մետաղյա աստղ,

ը) արդյունաբերական ապրանքներ, որոնք կարող են օգտագործվել որպես ծակող, կտրող զենք, օրինակ՝ գայլիկոն, սպասքի դանակ, սղոց, պտուտակահան, լինգ, մուրճ, հարթաշուրթ, խցանահանիչ,

թ) ենթամաշկային ներարկման ասեղ,

ժ) գործելու շյուղ:

4.1.3. Բույթ գործիքներ՝

ա) բեյսբոլի մական,

բ) գոլֆի մական, հոկեյի մական,

գ) նավակի թի,

դ) բիլյարդի կի,

է) ձկնորսության կարթ,

զ) մահակ:

4.1.4. Պայթուցիկ և դյուրավառ նյութեր՝

ա) զինամթերք,

բ) պայթուցիկ նյութ,

գ) պայթուցիկ սարք,

դ) պայթուցիկ նյութերի կամ պայթուցիկ սարքերի կրկնօրինակներ կամ նմանակումներ,

ե) արկ և այլ պայթուցիկ ռազմամթերք, բոլոր տիպի նռնակներ,

զ) գազեր և գազային կոնտեյներ, օրինակ՝ բուտան, պրոպան, ացետիլեն, թթվածին,

- է) հրավառության նյութ,
 - ը) ինքնահրկիզվող լուցկի,
 - թ) հրավառ հեղուկ վառելիք, օրինակ՝ բենզին, դիզելային վառելիք, կրակայրիչ լիցքավորող հեղուկ, սպիրտ, էթանոլ, այլ սպիրտ պարունակող տեխնիկական հեղուկ,
 - ժ) աերոզոլային ներկ, սկիպիդար և ներկ,
 - ի) ալկոհոլային հեղուկ:
- 4.1.5. Քիմիական և թունավոր նյութեր՝
- ա) թթու և հիմք,
 - բ) կոռոզիոն և սպիտակեցնող նյութեր, օրինակ՝ սնդիկ, քլոր,
 - գ) գազային բալոն, որոնք նախատեսված են մարդկանց վնասագրերծելու համար, օրինակ՝ արցունքաբեր գազ,
 - դ) ռադիոակտիվ նյութ, օրինակ՝ բժշկական կամ կոմերցիոն իզոտոպ,
 - ե) թույն, ինֆեկցիոն կամ կենսաբանական վտանգավոր նյութեր, օրինակ՝ բակտերիաներ և վիրուսներ,
 - զ) ինքնահրկիզվող նյութ,
 - է) կրակմարիչ:
- 4.1.6. Ցանկացած տեսակի թմրանյութ և թմրադեղ:
- 4.1.7. Ցանկացած տեսակի կենդանիներ, ձկներ, սողուններ, միջատներ և թռչուններ:
- 4.1.8. Փակ տուփ, արկղ, փաթեթ և պայուսակ, բացառությամբ անձնական օգտագործման համար նախատեսված թղթապանակի, պայուսակի և այլն:
- 4.2. Եթե պահպանվող տարածք մուտք գործող անձանց և նրանց իրերի գննության ժամանակ հայտնաբերվում են հիշյալ կարգում չնշված այնպիսի իրեր կամ առարկաներ, որոնք կարող են մարդու կյանքին կամ առողջությանը վնաս հասցնելու միջոց հանդիսանալ, Կարգադրիչի կողմից վերցվում են, որի մասին կազմվում է արձանագրություն, իսկ այն իրերը կամ առարկաները, որոնք կարող են առերևույթ հանցագործության առարկա հանդիսանալ, Կարգադրիչի կողմից վերցվելուց հետո հանձնվում են համապատասխան իրավասու մարմիններին, որի մասին ևս կազմվում է արձանագրություն:

**5. ՀԱՄԱՐԱԿԱՎԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ
ՆԵՐՍ ԹՈՂՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

- 5.1. Հասարակական կազմակերպությունների և լրատվամիջոցների ներկայացուցիչներին թույլատրվում է առանց հատուկ թույլտվության բաց դատական նիստերին ներս բերել ձայնագրող սարքեր:
- 5.2. Ֆոտոնկարահանող և տեսագրող սարքերի ներս բերումը բաց դատական նիստերին իրականացվում է նիստը նախագահող դատավորի թույլտվությամբ:
- 5.3. Մյուս բոլոր դեպքերում՝ հասարակայնության և լրատվամիջոցների ներկայացուցիչների մուտքը Պահպանվող տարածք իրականացվում է սույն կարգի մուտքի ելքի կանոններին համապատասխան:

6. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

6.1. Շինարարական և վերանորոգման կազմակերպությունների մասնագետների ու բանվորների, ինչպես նաև հաղորդակցության և տեղեկատվական համակարգերի մասնագետների մուտքը թույլատրվում է կառուցվածքային ստորաբաժանում՝ տնտեսվարի, առանձնացված ստորաբաժանումներում՝ ստորաբաժանման ղեկավարի հայտի հիման վրա:

6.2. Տնտեսական սպահովման համար պատասխանատու անձը մշտական հսկողություն է սահմանում շինարարա-վերանորոգողական և այլ աշխատանքներ իրականացնող անձանց նկատմամբ:

6.3. Էլեկտրասնուցման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի վթարի դեպքում վթարա-վերականգնողական ծառայությունների մասնագետներին և բանվորներին թույլատրվում է վթարի վայր մտնել աշխատանքային ժամերին՝ կառուցվածքային ստորաբաժանման տնտեսավարի, առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների կամ նրանց կողմից նշանակված աշխատողի, իսկ ոչ աշխատանքային ժամերին և օրերին՝ հերթապահ Կարգադրիչի ուղեկցությամբ:

7. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՄՈՒՏՔԻ-ԵԼՔԻ ԿԱՐԳԸ

7.1. Արտակարգ իրավիճակների դեպքում ժամանակավոր կասեցվում է մուտքը Պահպանվող տարածքներ:

7.2. Ծագած արտակարգ իրավիճակի և դրա հետևանքները վերացնելու նպատակով պահպանություն իրականացնող Կարգադրիչն ահագանգում է համապատասխան ծառայությանը և իրավիճակի մասին զեկուցում Դեպարտամենտի ղեկավարին, Ծառայության պետին և գործում ըստ նրանց ցուցումների:

7.3. Դատավորները, Աշխատողները և այցելուները ենթակա են տարհանման արտակարգ իրավիճակների ժամանակ գործողությունների պլանին համապատասխան:

7.4. Արտակարգ իրավիճակի վերացման ընթացքում ուստիկանության, արտակարգ իրավիճակների պետական ծառայության աշխատակիցների մուտքն իրականացվում է Դեպարտամենտի, առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների կամ նրանց կողմից նշանակված անձանց ուղեկցությամբ:

7.5. Պահպանվող տարածքում գտնվող մարդկանց կյանքին ու առողջությանը վտանգ սպառնալու դեպքում վթարային և հրշեջ ծառայությունների հաշվարկները վթարների և հրդեհի, ուստիկանության և շտապ բժշկական օգնության աշխատակիցները՝ պատահարների դեպքում, ներս են թողնվում առանց խոչընդոտների:

7.6. Արտակարգ իրավիճակների հետևանքները վերացնելուց հետո վերականգնվում է էլքի-մուտքի բնականոն կարգը:

8. ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱՐԾԵՔՆԵՐԻ ՇԱՐՄԻ ԿԱՐԳԸ

8.1. Արգելվում է Պահպանվող տարածքից ծառայողական փաստաթղթերի և դատական գործերի, բացառությամբ մուտքային և էլքային նամակագրության, դուրս բերումը:

8.2. Բացառիկ դեպքերում՝ (սեմինարներին, խորհրդակցություններին մասնակցելու և այլ) դատավորը, Աշխատողը, դատարանի նախագահի, դեպարտամենտի, առանձնացված ստորաբաժանման ղեկավարի թույլտվությամբ, իրավունք ունի պահպանվող տարածքից դուրս բերել ծառայողական փաստաթղթեր:

Ձև 1

**ՄԻԱՆԳԱՄՅԱ ՄՈՒՏՔԻ
ԱՆՑԱԳԻՐ № _____**

Այցելու _____
(Անուն, ազգանուն)

Ներկայացված փաստաթուղթը _____
Ընդունող _____

Մուտքի օրը « _____ » _____ 20__ թ.
Մուտքի ժամը _____ Ելքի ժամը _____

(ընդունողի ազգանունը, ստորագրությունը)

Ձև 2

**ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ՄՈՒՏՔԻ ԵՎ ԵԼՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ
ՄԱՏՅԱՆ**

Հ/Հ	Այցելուի անունը, ազգանունը	Ինքնությունը հաստատող փաստաթղթի անվանումը և համարը	Ընդունողի անունը, ազգանունը	Մուտքի օրը, ժամը	Ելքի օրը, ժամը

Ձև 3

ԳՈՒՑՔԻ ԵՎ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴՈՒՐՄ ԲԵՐՄԱՆ

ԱՆՑԱԳԻՐ № _____

Դուրս բերողը _____
(պաշտոն, անուն, ազգանուն)

Դուրս բերվող գույքը _____

(անվանումը, տեսակը և քանակը)

Դուրս բերելու նպատակը, ժամկետները _____

Թույլտվություն տվող անձը _____
(պաշտոնը, ստորագրությունը)

« _____ » _____ 20__ թ.

ԶԵՆՔԻ ԵՎ ԶԻՆԱՄԹԵՐՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՏՅԱՆ

Հ/Հ	Այցելույի անունը, ազգանունը	Հանձնված գենքի և զինամթերքի անվանումը	Տեսակը	Քանակը	Հանձնման օրը, ժամը	Ընդունողի ստորագրությունը	Վերադարձման օրը, ժամը	Ստացողի ստորագրությունը
1.								
2.								
3.								
4.								
5.								

ԶԵՆՔԻ ԵՎ ԶԻՆԱՄԹԵՐՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԿՏՐՈՆ N ____

Այցելու _____
(անուն, ազգանուն)

Հանձնված գենքը և զինամթերքը _____
(անվանումը, տեսակը, քանակը)

(Զենք կրելու իրավունքի փաստաթղթի տվյալները)

Հանձնման օրը « _____ » _____ 20__թ. ժամը _____
Վերադարձման օրը « _____ » _____ 20__թ. ժամը _____

(ընդունողի պաշտոնը, ստորագրությունը)

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ____

Անձին զննության ենթարկելու (զննության ենթարկվելուց հրաժարվելու) մասին
« _____ » _____ 20__թ. _____
(կազմման վայրը)

Ես՝ _____
(արձանագրություն կազմողի պաշտոնը, անունը, ազգանունը)

Մասնակցությամբ ընթերականներ՝

1. _____
(ընթերականի անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն)

2. _____
(ընթերականի անունը, ազգանունը, հայրանունը, հասցեն)

ԱՀ դատարանների նախագահների խորհրդի 2018թ. մայիսի 16-ի № 13-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն զննության ենթարկեցի քաղաքացի _____

(անուն, ազգանուն, հայրանուն)

(հասցե)

Զննությամբ քաղաքացի _____ -ի մոտ _____
(անուն, ազգանուն) (հայտնաբերվել է/չի հայտնաբերվել)

հետևյալը _____
(արգելված իրերի մանրամասն նկարագիրը)

Արձանագրությունն ընթերցվեց բարձրաձայն, մասնակիցների կողմից դիտողություններ _____

(եղան, չեղան)

Մասնակիցներից՝ _____ կատարեց հետևյալ դիտողությունը՝

(անուն, ազգանուն)

Քաղաքացի _____

(անուն, ազգանուն, հայրանուն)

(հրաժարման պատճառը)

պատճառաբանությամբ հրաժարվում է զննության ենթարկվելուց:

Արձանագրությունը կազմեց _____

(ստորագրություն, ազգանուն)

Ընթերականներ _____

(ստորագրություն, ազգանուն)

(ստորագրություն, ազգանուն)

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ
ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԴԵԿԱՎԱՐ**

Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ